Ճանաչի՛ր ինքդ քեզ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 31.05.2023թ. չորեքշաբթի թիվ 25 (1102)

Նախնյաց փառքերը վերածնելու հավատով

Մայիսի 26-ին երկրի դպրոցներում կայացավ *«Վերջին դասը»*

Հետահայաց

Նոր սերունդ

... Այսպես ապրեցինք դարեր: Ամեն ուսումնական տարվա վերջում յուրաքանչյուր հայ ծնող իր զավակի կանխատեսելի ապագայի բերկրանքն է ապրում...

Ամեն ***«Վերջին զանգի»*** արարողության ամեն հայ ուսուցիչ, իբրեւ բարի սերմնացան՝ իր հունձքով հպարտ, իր կրթած սաներին իբրեւ հայոց հարցը լուծող սերունդ է պատկերացնում...

Ու ամեն հայ երիտասարդ, իր անցյալով ծանրաբեռ, իր կյանքի վճռորոշ հանգրվաններին դեմ-հանդիման, իր ճանապարհը դեպի **Արարատ** է երազում...

Մեզ ելնելու սարեր կան դեռ ու... **Վերադարձի** փառքեր...

Ապագա: Կա՞ մի անհատ կամ ժողովուրդ, որ այս բառը չընկալի՝ որպես իր երազանքների խտացված խորհրդանիշը: 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ այս բառը մեզանում ավելի հաճախ գործածական էր՝ իբրեւ խորագիր, վերնագիր, վերտառություն... Այն բանաստեղծության, կտավի, պատմվածքի, թատերգության, լրագրության ու հրապարակախոսության հիմնական թեմա էր, առանցքային գաղափար...

Այսօր էլ, մեր ժողովրդին պատուհասած ազգակործան ճգնաժամի պայմաններում, այս բառ-խորհրդանիշ-գաղափարը կրկին դառնում է գերիշխող մեր անձնական ու հավաքական գիտակցության մեջ... Բարի երթ մաղթելով մեր շրջանավարտներին դեպի մեծ կյանք՝ դարձյալ մեր մաղթանքների, ծրագրերի, երազանքների ծիրում կիզակետվում է **Ապագան**. մեզանից յուրաքանչյուրի եւ բոլորիս ցանկալի ապագան՝ **Լույս-գալիքը**, որ մոտենում է **Լեռան** տեսքով:

Հասունություն: Երկրի կրթօջախներում այս օրերին ընթանում են տարեվերջյան ավարտական քննությունները: Դրանք առավել նշանակալի են հատկապես հանրակրթական դպրոցների շրջանավարտների համար. դրանց արդյունքում նրանք ստանում են **հասունության** վկայական... այդպես է ավանդաբար անվանվել դպրոցի ավարտական վկայականը...

Հասունությունն սկսվում է վերջին զանգից, թրծվում ավարտական կամ ընդունելության քննությունների բովում, իր լրումին է հասնում մասնագիտություն ձեռք բերելուց կամ ընտանիք կազմելուց հետո: Հասունության հետ գալիս է **համաժամանակյա տարիքը.** դրանից հետո շարունակվում է անհատի կյանքի պատմությունը, բայց նա, որպես կանոն, մնում է հոգով ու նկարագրով անփոփոխ եւ միշտ երիտասարդ... երիտասարդ ու կենսախինդ:

շարունակությունը՝ էջ 3

ՀՀ Վարչապետ Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը՝ Հանրապետության տոնի առիթով



Հայաստանի Հանրապետության մեծարգո՛ նախագահ,

Ազգային ժողովի մեծարգո՛ նախագահ,

Կառավարության հարգելի՛ անդամներ,

Գործադիր իշխանության ներկայացուցիչնե՛ր,

Ազգային ժողովի պատգամավորնե՛ր,

Դատական իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմինների հարգելի՛ ներկայացուցիչներ,

Սիրելի՛ ժողովուրդ,

Հայաստանի Հանրապետության սիրելի՛ քաղաքացիներ,

Շնորհավորում եմ բոլորիս՝ մայիսի 28-ի՝ Հանրապետության օրվա առիթով: 1918 թվականի այս օրը հայ ժողովուրդն իր պատմության մեջ առաջին անգամ կառավարման հանրապետական կարգով պետություն ստեղծեց: Առաջին անգամ մեր իրականության մեջ ստեղծվեց պետություն, որտեղ իշխանությունը պատկանում է ժողովրդին:

շարունակությունը՝ էջ 2

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ Հանրապետության տոնի առիթով

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում համայն աշխարհասփյուռ մեր ժողովրդին՝ Հանրապետության տոնի առիթով:

Հայոց ցեղասպանությունը վերապրած մեր ժողովուրդը զորեղ հավատքով եւ արիավիրքների առջեւ չընկճվող ոգով կերտեց Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի մայիսյան հաղթանակները եւ առաջին հանրապետության հաստատումով լուսավոր նոր էջը բացեց իր պատմության:

շարունակությունը՝ էջ 2

Այս համարում

● *2023-2024 ուսումնական տարվա բուհերի ընդունելության միասնական քննությունների քննական կենտրոնների ցանկը եւ ժամանակացույցը:*

տե՛ս՝ էջ 7

ՀՀ Վարչապետ Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը՝ Հանրապետության տոնի առիթով

սկիզբը՝ էջ 1

Այս դարակազմիկ իրադարձությունը տեղի ունեցավ կայսրությունների փլուզման, նոր կայսրության եւ աշխարհակարգի ձեւավորման պայմաններում, երբ մեր ժողովուրդը Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատամարտերում կարողացավ ապացուցել ապրելու իր իրավունքը:

Բայց Առաջին Հանրապետությունն ընդամենը երկուսուկես տարվա կյանք ունեցավ՝ նաեւ այն պատճառով, որ հաղթելով գոյամարտում, հռչակելով պետություն՝ մենք անկախ պետությունում ապրելու մեր տեսլականը չհասցրեցինք ձեւակերպել, առաջին հանրապետությունում ապրելը չհասցրեցինք ինքներս մեզ համար դարձնել հարմարավետ եւ շահավետ: Առաջին Հանրապետությունը չհասցրեց ինքն իրեն դիրքավորել որպես սեփական քաղաքացիների անվտանգության, բարեկեցության ու երջանկության միջոց, որովհետեւ, ըստ էության, խաղաղության եւ ոչ մի օր չունեցավ իր գոյության ողջ ընթացքում: Սովը, ցեղասպանությունից մազապուրծ գաղթականությունը, ներքին խժդժությունները, տնտեսության, պետական ինստիտուտների, պետականության մշակույթի բազմադարյա բացակայությունը, արտաքին ազդեցությունը, պատերազմը՝ Առաջին Հանրապետության անկման պատճառ դարձան:

Սրանով, սակայն, Առաջին Հանրապետության դերն ամենեւին չի նսեմանում: Ավելի քան 540 տարվա ընդմիջումից հետո հայ ժողովուրդը պետություն ունեցավ, եւ առաջին անգամ ունեցավ Հանրապետություն, եւ այդ Հանրապետության դասերն այսօր ահա մեր սեղանին են: Այդ բազմաթիվ դասերից այսօր ուզում եմ ընդգծել միայն մեկը. Հայաստանի Հանրապետությունում ապրելը քաղաքացու համար պիտի լինի հարմարավետ եւ շահավետ, բարեկեցությունն ու երջանկությունն այսո՛ր պիտի լինեն եւ ոչ թե հեռավոր մի ապագայում, եւ պատմական հանգույցները հանգուցալուծելու պահը հիմա է եւ ոչ թե հետո: Առաջին Հանրապետությունը չունեցավ ժամանակ. մենք դեռեւս ունենք: Առաջին Հանրապետությունը չկարողացավ կանգուն մնալ 20 թվականի պատերազմից հետո, մենք կանգուն ենք 20 թվականի պատերազմից հետո եւ կառուցում ենք մի հայրենիք-պետություն, որն այստեղ է եւ հիմա է, եւ մենք այլեւս չենք գնալու նոր հայրենիք փնտրելու, որովհետեւ մեր հայրենիքը մեր պետությունն է: Այդ պետությունը ե՛ւ նպատակ է, եւ միջոց: Նպատակ է, որովհետեւ հենց պետությունը կարող է լավագույնս արտահայտել իր հիմնադրի՝ ժողովրդի շահը, միջոց է, որովհետեւ հենց պետությունը կարող է լավագույնս արտահայտել իր հիմնադրի՝ ժողովրդի շահը: Իսկ այդ շահը պարտադրում է ունենալ անվտանգություն, բարեկեցություն եւ երջանկություն՝ մեր բազմաչարչար ժողովրդի համար, իսկ դա հնարավոր է՝ հարեւանների հետ կարգավորված հարաբերությունների պայմաններում, միայն ու միայն խաղաղության պայմաններում, մի բան, որ չունեցավ Առաջին Հանրապետությունը, մի բան, որ, ցավոք, դեռեւս չունի Երրորդ Հանրապետությունը: Հենց այս է պատճառը, որ մենք որդեգրել եւ հետեւողական իրագործում ենք խաղաղության օրակարգը, որովհետեւ մեր բոլոր նահատակներն ընկել են՝ հանուն սեփական ժողովրդի երջանկության եւ ոչ տառապանքի, ու բարեկեցիկ, զարգացած, ապրող ու անվտանգ Հայաստանն է, Հայաստանի Հանրապետությունը, Հայաստան պետությո՛ւնը, որ պիտի հավերժ խաղաղություն բերի մեր բոլոր նահատակների հոգիներին:

Փառք հայրենիքի համար իրենց կյանքը զոհաբերած մեր բոլոր նահատակներին:

Եվ կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

ՀՀ բարձրագույն ղեկավարությունն այցելել է Սարդարապատի հուշահամալիր

Վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** նախագահ **Վահագն Խաչատուրյանի,** Ազգային ժողովի նախագահ **Ալեն Սիմոնյանի,** ՀՀ բարձրագույն ղեկավարության եւ Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հետ Հանրապետության տոնի առիթով այցելել է Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր:

Վարչապետը հուշահամալիրից հանդես է եկել շնորհավորական ուղերձով, որից հետո հնչել է Հայաստանի Հանրապետության պետական օրհներգն ու տեղի ունեցել տոնական քայլերթ: Նիկոլ Փաշինյանը ծաղկեպսակ է դրել Սարդարապատի ճակատամարտի հերոսների հիշատակը հավերժացնող հուշակոթողին եւ հարգանքի տուրք մատուցել նրանց հիշատակին:

Վարչապետը Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարանում ներկա է գտնվել նաեւ պետական պարգեւների հանձնման արարողությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Սարդարապատի հուշահամալիր

Մայիսի 28-ին, Հանրապետության տոնի առիթով, **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ** Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Սարդարապատի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու մայիսյան հերոսամարտերում զոհված քաջարի հայորդիների անմար հիշատակին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ծաղկեպսակ զետեղեց հուշակոթողի առջեւ, ապա աղոթք բարձրացրեց հայրենյաց պաշտպանների հոգիների հանգստության համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ Հանրապետության տոնի առիթով

սկիզբը՝ էջ 1

Այսօր Հայաստանի անվտանգությանն ու սահմանամերձ տարածքների ապահովությանը, Արցախի ինքնիշխանությանը սպառնացող վտանգները, այլեւ ներազգային զարգացումները խորը մտահոգություններ են ստեղծել հայրենական անդաստանում, ողջ հայության կյանքում: Մեր հայրենիքի ու ժողովրդի դեմ իրականացվող քայլերին, ծավալապաշտական ձգտումներին դիմակայելու ուղին մեր միասնական պայքարն է, միակամությունն ու վճռականությունը:

Անկախության վերահաստատման եւ Առաջին հանրապետության հռչակման հիշատակը տոնելով, սիրելի՛ հայորդիներ, ոգեշնչվենք եւ գոտեպնդվենք երանելի մեր հայրերի ազատատենչ ոգով ու սխրագործություններով, մերժենք եւ հեռացնենք մեր կյանքից թշնամանքը, ատելությունն ու հակառակությունները եւ զորացնենք ազգային մեր միաբանությունը: Լցվենք վճռականությամբ՝ պաշտպանելու շրջափակման մեջ գտնվող Արցախի մեր ժողովրդի ինքնորոշման իրավունքը, անխաթար խաղաղությունն ու արժանապատիվ մեր կյանքը:

Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված օգնական լինի մեզ՝ հաղթահարելու մեր առջեւ ծառացած փորձությունները եւ հաստատելու բարօր ու լուսավոր գալիքը ազգի ու հայրենիքի: Թող Քրիստոս մեր Փրկչի ողորմությունն ու շնորհները հովանի լինեն համայն մեր ժողովրդին ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփյուռս:

Պարգեւատրումներ՝ Հանրապետության տոնի կապակցությամբ

Հանրապետության նախագահ **Վահագն Խաչատուրյանի** հրամանագրով, Հանրապետության տոնի առթիվ, հայրենիքի պաշտպանության եւ անվտանգության ապահովման գործում ներդրած ավանդի, մարտական գործողությունների ընթացքում ցուցաբերած խիզախության եւ նվիրումի համար մի խումբ զինծառայողներ պարգեւատրվել են մեդալներով:

Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարանում տեղի ունեցած պարգեւատրման արարողությանը Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը հանձնել է պարգեւները, շնորհավորել պարգեւատրվածներին եւ շնորհակալություն հայտնել՝ խիզախության եւ նվիրումի համար:

Իր խոսքում Հանրապետության նախագահն ասել է.

«Շնորհավորում եմ բոլորիս՝ Հանրապետության օրվա կապակցությամբ: Մայիսի 28-ը մեր պետականության ամենախորհրդանշական տոնն է եւ մեր պատմության ամենապայծառ դրվագներից մեկը:

1918 թվականի մայիսի 28-ին Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը Սարդարապատի հերոսամարտում մեր հաղթանակի անմիջական արդյունքն էր եւ ավելի քան 500 տարվա դադարից հետո հայկա-

կան պետականության վերածննդի հռչակագիրը: Առաջին Հանրապետությունը ձեւավորվեց մեզ պարտադրված պատերազմի պայմաններում, երբ չունենալով բարեկամ ու դաշնակից մեր ժողովուրդը, մեր պետական այրերը կարողացան գտնել համախմբման ու զորեղ հակառակորդներին դիմագրավելու ներուժը:

Նույն էր նաեւ 1991-ին, երբ մեզ կրկին պարտադրվեց պատերազմ, եւ նորից մենք պետք է մեր անկախ պետականությունը կերտեինք պատերազմի բովում ու դիմադրության ճիգով՝ ճաշակելով եւ կորուստների դառնությունը, եւ հաղթանակների բերկրանքը: Մենք կարողացանք մեր միասնությամբ, մեր պայքարով ցույց տալ աշխարհի քարտեզի վրա Հայաստանի Հանրապետության լինելու իրավունքը:

Այսօր՝ 2023 թվականի մայիսի 28-ին, երբ Առաջին հանրապետությունը վաղուց արդեն պատմություն է, իսկ 1991 թվականի սեպտեմբերի 21-ին ծնունդ առած Հայաստանի Հանրապետությունը՝ մեր ներկան, լավ առիթ է մեր պատմությունը, անկախ պետականության անցած ուղին վերարժեւորելու եւ գնահատելու համար: Ընդհանրապես, թե՛ Առաջին հանրապետության, թե՛ Խորհրդային Հայաստանի վերաբերյալ հնչում են ամենատարբեր գնահատականներ, սակայն իրականությունն այն է, որ մեր անկախ պետականությունը մեր ժողովրդի միասնական կամքի արդյունքն է: Մենք համոզված ենք, որ այսօր էլ՝ ապավինելով մեր ուժին, վստահելով ու հավատալով մեր իշխանությանն ու մեր ժողովրդի իմաստնությանը, կարող ենք դիմագրավել դժվարին մարտահրավերներին եւ կերտել այն երկիրը, որի մասին երազում ենք:

Եվս մեկ անգամ շնորհավորելով բոլորիս՝ մաղթում եմ հաջողություններ, ուժ, կորով ու ամրություն մեր պետականությանը»:

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի շնորհավորական ուղերձը՝ Հանրապետության տոնի առթիվ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ՝ Առաջին Հանրապետության տոնի առթիվ:

Հանրապետության քաղաքացի լինելը, որքան էլ այդ ժամանակների համար անծանոթ իրողություն էր, այնուամենայնիվ, նոր դարաշրջանի սկիզբն էր, որն անշրջելի էր լինելու ժողովրդավարության եւ մեր օրերի Հանրապետությանը հասնելու համար:

Մեր ժողովրդի համար օրհասական պահին ստեղծված Հանրապետությունը ինքնակազմակերպման, ընտրությունների միջոցով կամարտահայտության եւ ազատատենչության կարեւոր մարմնավորումն էր:

Ամեն տարի այս օրը մենք հպարտությամբ ենք հիշում 1918 թվականի մայիսի 28-ին Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերը, մեր հերոսներին, որոնց անհավանական սխրանքները փառավորում են մեր ինքնությունը, սնում մեր էությունը: Եվ ինչպես մեր գոյամարտի վերաբերյալ տարբեր աշխատություններում է գրված. ,Ճակատամարտը շահված էր, Հայաստանը՝ փրկված»:

Առաջին Հանրապետությունը երկար կյանք չունեցավ, բայց անուրանալի դասեր թողեց հայոց պատմության էջերում, որոնք ուսումնասիրման, առերեսման եւ խորհելու մեծ հնարավորություն են տալիս սերունդներին:

1918 թվականը մեր երկրի վերածննդի խորհրդանիշն է ու ժառանգությունը, մեր պետականության հիմնաքարը, որի դրական եւ մնայուն արժեքները պահպանելու եւ ամրացնելու պատասխանատվություն ունենք:

Շնորհավո՛ր տոնդ, Հայաստանի Առաջի՛ն Հանրապետություն, հարգանք եւ խոնարհում պետականության ճանապարհին ընկած հերոսների եւ այն կերտող պետական գործիչների հիշատակին:

Նոր սերունդ

սկիզբը՝ էջ 1

Քննություն: Յուրաքանչյուր սերունդ ունի իր ասելիքն ու միայն իրեն վերապահված առաքելությունը, որ իր համար սահմանված չափով դառնում է գործ, մնայուն արժեք...

Յուրաքանչյուր սերունդ իր մուտքն աշխարհ սկսում է քննությամբ՝ ուղղակի, թե անուղղակի: Քննությունները լինում են տարբեր, լայն առումով՝ քննություն է յուրաքանչյուր արարք:

Առջեւում միասնական քննություններն են: Նոր սերնդի առաջին լուրջ փորձությունը՝ գործունեության ասպարեզ իջնելուց առաջ: Բայց նաեւ՝ փորձություն բոլորիս համար. ծնողների, ուսուցիչների, դպրոցի, բուհի, կրթության համակարգի, երկրի՛ քննություն:

Տա Աստված, որ այն հանձնենք պատվով:

Ընտրություն: Դպրոց գնում ենք **ակամա,** երբ հասնում ենք որոշակի տարիքի: Ըստ նախասիրության, թե ըստ հնարավորությունների՝ բուհ ընդունվում ենք՝ **ընտրությամբ:** Եվ այդ ընտրությամբ է պայմանավորվում մեր հետագա ողջ կյանքը:

Երկրի շրջանավարտների մեծ մասն այս օրերին փորձել է կատարել իր ճիշտ ընտրությունը՝ այն արտահայտելով միասնական քննությունների մասնակցության դիմում-հայտերի ներկայացմամբ, սակայն բուհերի **ընդունելության մրցույթների ամփոփումները** դեռ առջեւում են...

...Ընտրության հնարավորություն տրվում է ոչ ամեն օր: Եվ ամենքին չէ, որ վիճակված է **ճիշտ կողմնորոշվել:** Իսկ հաջողությունը ուղեկցում է նրանց, անհատ, թե ժողովուրդ, ովքեր ճիշտ են կողմնորոշվում **աստեղային ճամփաբաժաններին:**

Համալրում: *«Տվե՛ք ինձ հենման կետ, եւ ես կշրջեմ աշխարհը»* ... Արքիմեդի ուզածը, թեեւ անսովոր, բայց ընդամենը մի լծակ էր... Մեր սերունդը համալրվեց **նոր շրջանավարտներով,** որոնց մեջ հաստատ կան Արքիմեդներ՝ Արքիմեդի ուզած լծակը ստեղծելու ունակությամբ ու **կամքով**: Մեր ուզածը մեր երկրի **հզորացումն է, անկախության ամրապնդումը եւ մեր ազգային խնդիրների լուծումը**: Մեզ ուրիշի՛նը պետք չէ, մեզ մե՛ր հալալն է պետք, մեր մե՛ծ հալալը...

Ու դեպի մեր արդար Ունեցվածքը մեր **Մեծ Վերադարձի** ճանապարհին Անկախության սերունդը ստացավ հերթական, հավատանք՝ հզոր, համալրումը... Արդ, բարի գալուստ դեպի մեծ կյանք, դեպի ուսում ու աշխատանք, դեպի **Գործ** ու **Հաղթանակ**:

Գ.Մ.

Համաչափ զարգացում

Ամենամեծ աշխատանքը դեռ առջեւում է

Վարչապետ **Նիկոլ Փաշինյանն** Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Զարթոնք գյուղում ներկա է գտնվել տեղի նորակառույց մանկապարտեզի բացման արարողությանը: Այն կառուցվել է սուբվենցիոն ծրագրի շրջանակում, որի համար ներդրվել է 163 մլն դրամ: Միջոցների կեսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, մյուս մասը՝ համայնքը: Մանկապարտեզը նախատեսված է 80 երեխայի համար: 2004 թվականից ի վեր՝ գյուղում մանկապարտեզ չի գործել:

Դիմելով ներկաներին՝ Վարչապետը նշել է, որ կշարունակվեն մանկապարտեզի բակի բարեկարգման աշխատանքները: *«Այսինքն՝ մայրուղուց մինչեւ գյուղ կունենանք բարեկարգ ճանապարհ: Գյուղի ներսի ճանապարհը բավականին լավն է, մանկապարտեզի հարցը լուծված է, լուծված են դպրոցի հարցերը, եւ մեզ մնում է, որ մեր երեխաները սովորեն, մեր երեխաները նորանոր հմտություններ ձեռք բերեն եւ ամենակարեւորը՝ պատրաստվեն լինել Հայաստանի Հանրապետության հպարտ եւ արժանապատիվ քաղաքացի, որն ապրում է խաղաղ միջավայրում եւ որը սեփական քաղաքացիների համար երջանկություն եւ բարեկացություն կառուցելու առաջնային միջոցներ է ստեղծում:*

Շնորհակալություն եմ հայտնում՝ կատարված աշխատանքի համար, բայց ինչպես ասվեց՝ ամենամեծ աշխատանքը դեռ առջեւում է: Իմիջայլոց, ասեմ՝ ճանապարհին բավականին շատ անմշակ հողեր տեսա, պետք է նաեւ դրա պատճառները հասկանանք: Արարատյան դաշտում անմշակ հողը շատ զարմանալի տեսարան է, բայց ենթադրում եմ դրա համար կան պատճառներ: Մենք պետք է այդ պատճառների մեջ խորամուխ լինենք, որպեսզի ամեն մի քառակուսի մետրից կարողանանք ստանալ բերք, բարիք, որովհետեւ դրանից է կախված մեր երկրի նկատմամբ տիրող զգացումը: Կրկին շնորհավոր Հանրապետության օրը եւ շնորհավոր մանկապարտեզի բացման օրը»,- ասել է Նիկոլ Փաշինյանը:

Կառավարության ղեկավարը շրջայց է կատարել մանկապարտեզով, ծանոթացել իրականացված աշխատանքներին: Զարթոնք գյուղում նա նաեւ հարգանքի տուրք է մատուցել հայրենիքի համար իրենց կյանքը զոհաբերած հայորդիների հիշատակին:

«Վարչապետի գավաթ»

Ընդգծում ենք մեր պետականությունը, քաղաքացիությունը, ապրելու մեր կամքը...

Գեղարքունիքի մարզում՝ Շողակաթ-Սեւանա լճի թերակղզի ճանապարհահատվածում, երրորդ տարին անընդմեջ տեղի է ունեցել *«ՀՀ վարչապետի գավաթ»* սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարը: Վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** ներկա է գտնվել մրցաշարի պարգեւատրման արարողությանը:

Մրցաշարն անցկացվել է կանանց եւ տղամարդկանց 2 տարիքային խմբերով: Առաջին տարիքային խմբում եղել են 18-ից 40 տարեկան կանայք եւ տղամարդիկ, երկրորդ տարիքային խմբում՝ 41 եւ բարձր տարիքի կանայք եւ տղամարդիկ:

Մրցաշարում երկու տարիքային խմբերում 1-ին, 2-րդ եւ 3-րդ տեղերը գրաված մասնակիցները պարգեւատրվել են ԿԳՄՍ նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով: Երկու տարիքային խմբերի 1-ից 10-րդ տեղեր գրաված մասնակիցներն ստացել են նաեւ դրամական մրցանակներ: Ըստ այդմ՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցն ստացել է 1.000.000 ՀՀ դրամ, 2-րդ տեղը՝ 500.000 ՀՀ դրամ, 3-րդ տեղը՝ 300.000 ՀՀ դրամ, 4-րդ տեղը՝ 100.000 ՀՀ դրամ, 5-10-րդ տեղերը՝ 50.000-ական ՀՀ դրամ:

Հաղթողներին պարգեւները հանձնել են վարչապետ **Նիկոլ Փաշինյանը,** Առողջապահության նախարար **Անահիտ Ավանեսյանը,** Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը,** ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Գիլոյանը:**

Վարչապետ Փաշինյանը շնորհակալագրեր եւ խրախուսական մրցակներ է հանձնել ամենատարեց կին եւ տղամարդ մասնակիցներին:

Մրցաշարի 300-ից ավելի մասնակիցների թվում է եղել նաեւ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը:

Միջոցառման ժամանակ Նիկոլ Փաշինյանը հանդես է եկել ելույթով, որում, մասնավորապես, նշել է.

«Կառավարության հարգելի՛ անդամներ,

Պետական այրե՛ր,

Հարգելի՛ ներկաներ,

Հաղթողնե՛ր եւ մասնակիցնե՛ր,

Նախ ուզում եմ բոլորիդ շնորհավորել՝ Հանրապետության օրվա առիթով: Պիտի ընդգծեմ, որ «Վարչապետի գավաթը» նաեւ մի մրցաշար է, որով մենք արձանագրում եւ ընդգծում ենք քաղաքացու եւ պետության կապը: Այսօր Սարդարապատում ելույթ ունենալիս ես ասացի, որ մեր ընկալումը հետեւյալն է. պետությունը, երկիրը, Հայաստանի Հանրապետությունում ապրելը պետք է լինի հարմարավետ եւ շահավետ ՀՀ քաղաքացու համար: «Վարչապետի գավաթ» մրցաշարերի կարեւորագույն իմաստներից մեկը հենց դա է՝ մենք ուզում ենք հնարավորինս շատ առիթներ ստեղծել, որպեսզի Հայաստանի Հանրապետության քաղաքացին ինքն իրեն հաղթահարելու, ինքն առաջին հերթին իր հետ մրցելու առիթ ունենա եւ ապացուցի որպես քաղաքացի, որպես պետության իրավատեր, որ մեր կամքը՝ ունենալու ինքնիշխան, ազատ, ուժեղ, զարգացած, բարեկեցիկ եւ երջանիկ պետություն, անսասան է: Մեր ընթացքը դա պիտի ամեն տարի ցույց տա:

Ուզում եմ բոլոր մասնակիցներին հատուկ շնորհակալություն հայտնել, որ այս մրցաշարերով մենք ընդգծում ենք մեր պետականությունը, մեր դրոշը, մեր քաղաքացիությունը, ապրելու մեր կամքը, հաղթահարելու մեր կամքը, առաջ շարժվելու մեր կամքը:

Ուզում եմ ընդգծել, որ հաջորդ տարվանից մենք այս մրցաշարի՝ խճուղային հեծանվավազքի մասշտաբները կընդլայնենք: Մրցումը նախ կմիջազգայնացնենք, այսինքն՝ բոլորը, անկախ քաղաքացիությունից, մասնակցելու հնարավորություն կունենան: Մրցաշարը կլինի Սեւանի շուրջը: Եթե անհրաժեշտություն լինի, մասնագետները կասեն, երկու օր կտեւի հեծանվավազքը, եւ, իհարկե, մրցանակային հիմնադրամն էլ համապատասխան կկրկնապատկվի: Հույս ունեմ, որ այս ընդգծումով մենք ավելի կուժեղացնենք այս ավանդույթը, կընդգծենք նաեւ Գեղարքունիքի մարզը, կընդգծենք Սեւանա լիճը: Մանավանդ՝ համոզված եմ, որ հաջորդ տարի Սեւանի շուրջ բոլոր ճանապարհները կլինեն արդեն կատարյալ վիճակում, եւ մենք չենք ամաչի այդ ճանապարհներ նաեւ օտարերկրացիներ հրավիրելու: Իսկ այս տարի մենք արդեն լողի «Վարչապետի գավաթը», կարծում եմ, կմիջազգայնացնենք, եւ մասնակցության հնարավորությունը կբացենք բոլորի համար, մանավանդ՝ հաշվի առնելով, որ բազմաթիվ ռելոկանտներ են ապրում Հայաստանի Հանրապետությունում, եւ նրանք նույնպես անընդհատ դիմում են եւ ասում, որ իրենք էլ մրցութային կարգով ցանկանում են մասնակցել:

Հարգելի՛ ներկաներ,

Իսկ մյուս մրցաշարերի մասին արդեն կմտածենք: Իհարկե, խճուղային հեծանվավազքի սիրողական բնույթը կպահպանենք: Տեխնիկական շատ հստակ կանոններ կսահմանենք հեծանիվների համար, որպեսզի ամեն ինչ ճիշտ եւ արդար լինի: Կրկին շնորհակալություն եմ հայտնում կազմակերպիչներին՝ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը, Առողջապահության նախարարությանը: Էկոնոմիկայի նախարարությանը՝ հատուկ շնորհակալություն մասնակցության համար, որովհետեւ, այո՛, առողջ ապրելակերպը, նաեւ այս կարգի միջոցառումը Հայաստանում միջազգայնացման պարագայում առավել եւս տուրիզմը խթանելու շատ մեծ պոտենցիալ ունի: Կարծում եմ, որ ամեն անգամ մենք պետք է ուժեղացնենք այս ենթատեքստը, այս համատեքստը եւ ընդգծենք խճուղային հեծանվավազքի «Վարչապետի գավաթ» մրցաշարի կարեւորությունը:

Շնորհակալություն եւ շնորհավորում եմ բոլորիս»:

Վերջին դաս

«Ավելի հաճախ լսեք ինքներդ ձեզ»

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը** ներկա է եղել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Վահան Թոթովենցի անվան հ. 57 հիմնական դպրոցի *«Վերջին դաս»* միջոցառմանը:

Ավարտական հանդիսությանը ներկա են եղել նաեւ Մանկավարժական համալսարանի ռեկտոր **Սրբուհի Գեւորգյանը,** բուհի պրոֆեսորադասախոսական կազմը, դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները, շրջանավարտների ծնողները:

ԿԳՄՍ նախարարը շնորհավորել է բոլոր շրջանավարտներին՝ նրանց մաղթելով հաջողություններ եւ նպատակների հետեւից գնալու հաստատակամություն:

«Ձեր կյանքի հաջորդ փուլերում հիշե՛ք այն բոլոր կարեւոր արժեքներն ու դասերը, որ այս տարիների ընթացքում սովորեցրել են ձեր ուսուցիչները: Անկախ դժվարություններից, խոչընդոտներից ու սխալներից, որոնք լինելու են, չհուսահատվե՛ք. առանց դրանց՝ չեն ծնվում հաջողություններն ու հաղթանակները: Ավելի հաճախ լսեք ինքներդ ձեզ՝ հասկանալու, թե ինչի եք ուզում հասնել»,- ասել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը եւ շրջանավարտներին մաղթել հաջողություններ առաջիկա ավարտական եւ ընդունելության քննությունների ժամանակ:

Շրջանավարտներին մաղթելով բարի երթ՝ նախարարն ընդգծել է, որ դպրոցի ամենամեծ նվաճումը նրանց հետագա հաջողություններն ու նվաճումներն են. *«Վստահ եմ՝ տարիներ հետո լսելու ենք ձեր հաջողությունների մասին»:*

Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել նաեւ ուսուցիչներին ու դպրոցի բոլոր աշխատակիցներին՝ ընդգծելով, որ դպրոցը մի ամբողջություն է, որտեղ յուրաքանչյուրն ունի իր կարեւոր առաքելությունը:

Շրջանավարտներին շնորհավորել են նաեւ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գեւորգյանը եւ Վահան Թոթովենցի անվան հ. 57 հիմնական դպրոցի տնօրեն **Նաիրա Տողանյանը:**

Շրջանավարտներն իրենց կատարումներում հիշատակի խոսք են ուղղել Արցախյան վերջին պատերազմում զոհված հերոսների հիշատակին, շնորհակալություն հայտնել ուսուցիչներին եւ դպրոցին:

Նշենք, որ այս տարի Երեւանի Վ. Թոթովենցի անվան հ. 57 հիմնական դպրոցն ավարտում է շուրջ 40 աշակերտ՝ 2 դասարանով:

ՀՀ դպրոցներում 2022-2023 ուստարում հիմնական դպրոցն ավարտում է շուրջ 35.300, իսկ 12-րդ դասարանը՝ 19.900 շրջանավարտ:

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի շնորհավորական ուղերձը՝ վերջին դասի առթիվ

Սիրելի՛ շրջանավարտներ,

Շնորհավորում եմ բոլորիդ՝ այս կարեւոր եւ ուղենշային օրվա կապակցությամբ: Գիտեմ, որ շատ հարցեր ունեք. դրանց մի մասի պատասխանները վստահաբար գտել եք դպրոցի եւ ձեր ուսուցիչների շնորհիվ: Հարցերի մեծ փնջի համար էլ այս պահին պատասխան չունեք եւ ձեր կյանքի հաջորդ փուլերում փորձելու եք գտնել այդ պատասխանները՝ սխալվելով ու հաջողելով, հիասթափվելով եւ ոգեւորվելով, կասկածելով ու վստահելով: Կարեւոր է, որ այդ հետաքրքիր ու բազմաշերտ ճանապարհին պահեք հիմնական առանցքն ու արժեքները: Որ ասպարեզում էլ ձեր ջանքը դնեք, եղե՛ք հաստատակամ ու փորձե՛ք անել լավագույնը, եղեք հոգատար հանրության առջեւ, պատասխանատու եւ պահանջատեր՝ պետության առջեւ, սովորեք սիրել ու ներել, ինքներդ ձեզ համար ձեւակերպել եւ պահել ձեր սկզբունքներն անորոշ ու բարդ իրավիճակներում, մտածել ձեր որոշումների եւ արարքների հետեւանքների ու ազդեցության մասին:

Մի՛ վախեցեք սխալներից. դրանք անխուսափելի են: Դժվարությունները հաղթահարելու եւ առաջ գնալու հաստատակամությունը ձեզ կդարձնի ուժեղ, ամուր եւ հասուն: Դուք արդեն տեսել եք համավարակը ու դաս արել անսովոր պայմաններում, անցել եք պատերազմի օրերով՝ շատերիդ դասարաններում հյուրընկալելով Լեռնային Ղարաբաղի երեխաներին: Դուք արդեն տեսել եք իրավիճակներ, որոնք շատ հաճախ թվում էին գրքային ու անիրական: Այս փորձառությունը մեզ բոլորիս շատ բան է սովորեցրել ու դեռ շատ բան պիտի սովորեցնի: Բաց պահեք ձեր միտքը՝ անընդհատ սովորելու համար:

Հիշե՛ք, որ դուք եք պետության վաղվա հենասյունը, եւ ձեր անձնական պատասխանատվությունից է սկսվում զարգացած հասարակության կայացումը, որտեղ մարդն ու նրա երջանկությունը, պետությունն ու հայրենիքը գլխավոր արժեքներ են:

Սիրելի՛ շրջանավարտներ, մի քանի օրից կմեկնարկեն ավարտական եւ ընդունելության քննությունները. լավագույն արդյունքներ ապահովելը թույլ կտա գնալ նպատակների իրագործման ճանապարհով:

Մաղթում եմ ձեզ լուսավոր ուղի, բազում հաջողություններ:

Բարի երթ:

«Գիտելիքներն օգնելու են ձեզ՝ հաջողությունների հասնելու ճանապարհին»

ՀՀ դպրոցներում այսօր տեղի է ունեցել ուսումնական տարվա վերջին դասը. հնչել է վերջին զանգը: Հիշարժան օրվա առթիվ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը** ներկա է եղել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հենակետային վարժարանի եւ Գ. Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոցի ավարտական միջոցառումներին:

Ներկա է եղել նաեւ ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության պետի պարտականությունները կատարող **Սուսաննա Ազատյանը:**

Նախարարի տեղակալն ուսումնառության ավարտի առթիվ շնորհավորել է շրջանավարտներին, նրանց մաղթել հաջողություններ, ձեռքբերումներ եւ նպատակների իրականացում:

«Դուք ոտք եք դնում ավելի մեծ կյանք, որտեղ մարտահրավերներն ավելի շատ են, խնդիրներն ու դրանցով պայմանավորված պատասխանատվության գիտակցումը՝ ավելի մեծ: Վստահ եմ, որ դպրոցում ձեռք բերած կարողություններն ու գիտելիքներն օգնելու են ձեզ հաջողությունների հասնելու ճանապարհին: Ձեզնից շատերն արդեն հավանաբար կայացրել են իրենց կյանքի կարեւոր որոշումներից մեկը եւ ընտրել են ապագա մասնագիտությունը»,- նշել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը՝ ավարտական եւ բուհական ընդունելության քննություններում հաջողություն մաղթելով շրջանավարտներին:

Արաքսիա Սվաջյանը նաեւ շնորհակալություն է հայտնել ուսուցիչներին եւ ծնողներին՝ շեշտելով, որ շրջանավարտների ներկա եւ ապագա հաջողություններում նրանք կարեւոր դերակատարներ են:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր **Սրբուհի Գեւորգյանը** նույնպես շնորհավորել է շրջանավարտներին՝ մաղթելով նպատակների իրականացում: Սրբուհի Գեւորգյանը շնորհակալություն է հայտնել ուսուցիչներին՝ իրենց առաքելությունը լավագույնս իրագործելու, իսկ ծնողներին՝ զավակների կրթության եւ դաստիարակության գործը Մանկավարժական համալսարանի վարժարանին վստահելու համար:

Մանկավարժական համալսարանի ուսումնական գծով պրոռեկտոր **Նաիրա Սաֆարյանը,** որը նաեւ հենակետային վարժարանի երկարամյա տնօրենն է, շնորհավորելով վարժարանի այս տարվա 29-րդ շրջանավարտներին, նշել է, որ հզոր սերունդ է կրթվել իրենց կրթօջախում:

«Համատեղ մենք կարողացանք դժվարին պայմաններում մեծ պատասխանատվությամբ, զգոնությամբ, աշխատասիրությամբ եւ նպատակասլացությամբ հաղթահարել բոլոր դժվարությունները: Վստահ եմ, որ ձեր աշխատանքով եւ ներդրումով դառնալու եք մեր երկրի հզորացման եւ ամրապնդման գործի հուսալի մասնակիցը»,- ասել է Նաիրա Սաֆարյանն ու բարի երթ մաղթել ՀՀ, Արցախի ու Ջավախքի բոլոր շրջանավարտներին:

Գ. Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոցի ավարտական միջոցառումն անցկացվել է Կամերային երաժշտության տանը:

Ավարտական միջոցառումների ընթացքում հնչել են Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված հերոսների հիշատակին նվիրված երգեր: Շրջանավարտները երախտիքի ու սիրո խոսքեր են ասել ուսուցիչներին, դպրոցին, ընկերներին:

Նշենք, որ Գ. Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոցն այս տարի այս տարի ունի 7, իսկ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հենակետային վարժարանը՝ 6 ավարտական դասարաններ:

Կառավարության որոշմամբ

Կընդգրկվի 107 դպրոց եւ կրթահամալիր

ՀՀ կառավարության որոշմամբ՝ ԿԳՄՍ նախարարությանը 2023 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցներից կատարվել է վերաբաշխում 396 մլն 600 հազար դրամ գումարի չափով: Գումարը կուղղվի ՀՀ Արագածոտնի, Արմավիրի եւ Գեղարքունիքի մարզերում 42 հաստատության՝ 20 կրթահամալիրի ստեղծման եւ 22 դպրոցի կառուցման համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակմանը եւ փորձաքննության ծառայությունների ձեռքբերմանը:

Հարցը զեկուցել է ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը**՝ նշելով, որ այս որոշումը եւս մեկ քայլ առաջ է՝ Կառավարության ծրագրի կարեւորագույն թիրախներից մեկի՝ 300 դպրոցի եւ 500 մանկապարտեզի կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման մասով. *«Այս որոշմամբ՝ հաստատում ենք ՀՀ Արագածոտնի, Արմավիրի եւ Գեղարքունիքի մարզերում կառուցվելիք կրթահամալիրների կամ դպրոցների ցանկը՝ կախված դրանց չափերից եւ նախատեսվող հզորություններից: Վերաբաշխումն իրականացվում է կապիտալ ծախսերի համար հատկացված միջոցներով, եւ նվազեցվող գումարը պայմանավորված է այն հանգամանքով, որ, օրինակ, Ալագյազի միջնակարգ դպրոցի մասով նախատեսում էինք որոշակի կառուցման աշխատանքներ, սակայն ընթացքում որոշել ենք այնտեղ կառուցել ավելի մեծ ծավալի եւ շրջակա բնակավայրերը սպասարկող համալիր»:*

Նախարարը նաեւ տեղեկացրել է, որ խնայելով ժամանակային եւ ֆինանսական ռեսուրսները՝ որոշվել է փաստաթղթերը ձեռք բերել առկա նախագծերի տեղակապման միջոցով. բոլոր այն տեղերում, որտեղ առկա է նմանատիպ հզորությամբ նախկինում օգտագործված նախագիծ, այն ուղղակի տեղակապվելու է:

Ժաննա Անդրեասյանը հիշեցրել է, որ ՀՀ կառավարության եւս երկու որոշմամբ՝ հաստատվել են Արարատի եւ Կոտայքի մարզերում 25 կրթահամալիրների եւ դպրոցների, իսկ Սյունիքի մարզի գյուղական բնակավայրերի 40 հաստատությունների ցանկերը:

«Այսպիսով՝ Կառավարության երեք որոշմամբ՝ 107 հաստատությունների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման աշխատանքների համար հատկացվել են միջոցներ, որոնցից շուրջ 60-ը կրթահամալիրներ են, որոնք գործում են նաեւ որպես մանկապարտեզներ: Այս որոշումները վերաբերում են շուրջ 30 հազար երեխաների, որոնք հնարավորություն կունենան հաճախելու բոլորովին նոր, անվտանգ եւ նոր գույքով հագեցված դպրոցներ եւ կրթահամալիրներ»,- նշել է նախարարը

շարունակությունը՝ էջ 8

Անդրադարձ

Ակադեմիական քաղաքի հետ կապված զարգացումների շուրջ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը** Ազգային ժողով-Կառավարություն հարցուպատասխանի ընթացքում անդրադարձել է ակադեմիական քաղաքի հետ կապված զարգացումներին: Պատգամավոր **Արեն Մկրտչյանին** հետաքրքրել է, թե ինչ փուլում է գտնվում ծրագիրը, եւ արդեն հայտնի՞ է՝ ինչ ծախսերի մասին է խոսքը:

Նախարարը նշել է, որ բավականին մեծ հանրային հետաքրքրություն կա նախագծի հանդեպ: *«Ապրիլի վերջին Հայաստան է ժամանել գերմանացի ճարտարապետների խումբ, որոնք եղել են այն տարածքներում, որտեղ պլանավորվում է կառուցել ակադեմիական քաղաքը: Արդեն ստացել ենք նախնական ուսումնասիրության հիման վրա նրանց ներկայացրած առաջարկները, թե ինչ ժամկետներում է հնարավոր մշակել գլխավոր հատակագիծը կամ պլանը: Քանի որ նախատեսում ենք նախագիծն իրականացնել փուլային տարբերակով եւ առաջին փուլով առաջնահերթ ենք համարում արվեստների կլաստերի կառուցումը, հետեւաբար նրանք ներկայացրել են կոնկրետ առաջարկներ հենց արվեստի կլաստերի վերաբերյալ: Այս պահին ընթանում են*

բանակցություններ, որպեսզի ամեն ինչ լինի առավել հասկանալի եւ դետալային»,- ընդգծել է նախարարը:

Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ զուգահեռ ընթանում են այլ աշխատանքներ. ձեւավորվել եւ արդեն գրանցվել է ծրագիրն իրականացնող *«Ակադեմիական քաղաք»* հիմնադրամը: Առաջիկայում կձեւավորվի հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը, որը կկառավարի հիմադրամը: Բացի այդ՝ ՀՀ կադաստրի կոմիտեն ամփոփել է ակադեմիական քաղաքի համար հատկացված գույքագրման գործընթացը, եւ առաջիկայում կլինեն որոշումներ՝ հիմնադրամին կոնկրետ գույքեր տրամադրելու մասով: *«Այսինքն՝ ամեն ինչ գնում է իր ընթացքով, եւ հույս ունենք՝ բավականին արագ անցնել մյուս փուլերին»,-* վստահեցրել է նախարարը:

Անդրադառնալով պատգամավորի այն հարցին, թե արդեն հայտնի՝ է ինչ ծախսերի մասին է խոսքը, Ժաննա Անդրեասյանը նշել է, որ այս պահին կա հստակություն՝ առաջին փուլի աշխատանքների արժեքի հետ կապված: Հետագա փուլերի արժեքը կախված կլինի առաջին փուլի արդյունքներից: *«Սակայն այստեղ մենք որդեգրել ենք ավելի ֆունդամենտալ մոտեցում. դիտարկում ենք ոչ միայն ակադեմիական քաղաքը՝ որպես ենթակառուցվածի կառուցման աշխատանքներ, այլ կարեւորում ենք, որ դրանում ներգրավված լինի, օրինակ՝ ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանը: Սա նոր հնարավորություն կընձեռի՝ կարողությունների զարգացման եւ տեղում մասնագիտական ռեսուրսի ձեւավորման առումով: Հետեւաբար, ունենք բավականի ճկուն իրավիճակ եւ արժեքի առումով կարող ենք ընտրություն անել՝ որոշ բաղադրիչների մասով»,-* շեշտել է նախարարը եւ հավելել, որ երբ աշխատանքները կհստակեցվեն, մանրամասն կներկայացվեն նաեւ արժեքի հետ կապված դիտարկումները:

Փոփոխություններ «*Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին*» օրենքում

Ազգային ժողովի նիստում երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունվել է *«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին»* նախագիծը:

Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը**՝ նշելով, որ առաջինից երկրորդ ընթերցում ընկած ժամանակահատվածում նախագծի վերաբերյալ առաջարկություններ չեն ներկայացվել:

Նախարարը հիշեցրել է, որ նախագծով առաջարկվում է հանրակրթական, նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողների անընդհատ կրթության համար բարելավել պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման մասով վարչարարությունը:

Նրա խոսքով՝ մեր երկրում պարտադիր է 12-ամյա հանրակրթությունը, որը կարող է իրականացվել դպրոցներում կամ 9-րդ դասարանից հետո՝ նաեւ նախնական կամ միջին մասնագիտական հաստատություններում: Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ *«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին»* օրենքով նախատեսված է, որ մինչեւ 19 տարեկան լրանալը այն սովորողները, որոնք դեռեւս չեն ավարտել իրենց ուսումնառությունը, ավտոմատ կերպով օգտվում են տարկետման իրավունքից: Նրա խոսքով՝ առկա են դեպքեր, երբ որոշ հանգամանքներից ելնելով՝ 19 տարեկան լրանալուց հետո եւս սովորողը դեռեւս չի ավարտել իր ուսումնառությունը: Այս պարագայում եւս նրանք կարողանում են առանց ընդհատման շարունակել իրենց կրթությունը, հետո նոր անցնել պարտադիր զինվորական ծառայության:

«Սակայն գործող օրենքն ունի որոշ անհարթություններ, որոնք առաջ են բերում խնդիրներ: Մասնավորապես՝ օրենքով սահմանափակված են այն հիմքերը, որոնք կարող են կիրառվել 19 տարեկան լրացած սովորողի՝ անընդհատ կրթության իրավունքի պահպանման տեսանկյունից: Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կարող է տրվել տարբեր հիմքերով՝ առողջական վիճակը, ընտանեկան պայմանները եւ այլն: Եվ բոլոր այն դեպքերում, երբ տարկետումն ունեցել է այլ հիմք, քան սովորելը, առաջացել են անհարթություններ եւ խնդիրներ: Հետեւաբար, առաջարկվող փոփոխությամբ հստակեցվել են օրենքով սահմանված հիմքերից որեւէ մեկի պարագայում անընդհատ կրթության հնարավորությունը, ինչպես նաեւ ավելի հստակ է դարձել առանց ընդհատման բառերի ավելացմամբ այս իրավունքի պահպանումը»,- ընդգծել է նախարարը:

Ժաննա Անդրեասյանը վստահեցրել է, որ փոփոխությունը էապես կհեշտացնի վարչարարությունը եւ կբարելավի բազմաթիվ մարդկանց՝ սովորելու եւ այդ ընթացքում տարկետումից անխափան կերպով օգտվելու հնարավորությունը:

Ըստ նախարարի՝ քանի որ արդեն ամառային զորակոչի ընթացքում նշյալ կարգավորման կիրառման կարիք կա, առաջարկվել է նախագիծը քննարկել հատուկ ընթացակարգով:

Առաջին ընթերցմամբ զեկույցից հետո նախարարը պատասխանել է նաեւ ԱԺ պատգամավորների հարցերին: Պատգամավոր Արման Եղոյանը ԿԳՄՍ նախարարից հետաքրքրվել է ընդունելության քննությունների հետ կապված կարգավորումներով՝ արդյոք ճի՞շտ են այն տեղեկությունները, որ դիմորդներից ոմանք չեն կարողանում ընդունվել բուհ եւ հետո մեկնել պարտադիր զինծառայության, քանի որ ընդունելության քննությունները հաճախ ավելի ուշ են լինում, քան զորակոչի օրերը: *«Նման խնդիր պետք է չլինի, քանի որ միասնական քննությունների ժամանակացույցը եւ զորակոչի ժամկետները հստակորեն քննարկվում են: Սա նոր չէ եւ ամեն տարի կիրառվող պրակտիկա է: Միասնական քննությունները տեղի են ունենում այն ժամանակահատվածում, երբ զորակոչը դեռեւս չի ավարտվել, եւ նույնիսկ մրցույթի արդյունքներն են ամփոփվում այդ ընթացքում, որպեսզի Պաշտպանության նախարարությանը փոխանցվեն անհրաժեշտ տվյալները: Զուգահեռաբար՝ ընդունելության քննությունների ընթացքում նաեւ գործարկում ենք ՊՆ-ի հետ համատեղ ծրագրերը՝ «Պատիվ ունեմ եւ այլն»,-* պարզաբանել է Ժաննա Անդրեասյանը՝ ընդգծելով, որ եթե հստակ խնդիր կա, կարող են ուսումնասիրել եւ արձագանքել դրան: Պատգամավորը հետաքրքրվել է նաեւ բուհերի ընդունելության քննությունների էլեկտրոնային հայտագրման հարցով՝ նշելով, որ որոշ դիմորդներ չեն հասցրել հայտագրվել: Ի պատասխան՝ Ժաննա Անդրեասյանը պարզաբանել է, որ էլեկտրոնային հայտագրումը գործում է դեռեւս 2020 թվականից: Ըստ նրա՝ բավականին ժամանակ է տրված եղել, որ դիմորդները կարողանան կատարել էլեկտրոնային հայտագրում, սակայն որոշ քաղաքացիներ պարզապես այն թողել են վերջին կես ժամին եւ բաց թողել հայտագրման ժամանակահատվածը: *«Մենք պետք է սովորենք, որ կան ժամկետներ եւ ընթացակարգեր, որոնք պետք է պահել»,-* ընդգծել է նախարարը եւ պարզաբանել, որ տեխնիկական խնդիրների կասկածի առկայության դեպքերում խնդիրը լուծվել է՝ հօգուտ դիմորդի:

Պատգամավոր **Լիլիթ Ստեփանյանի** այն հարցին՝ արդյոք այս կարգավորումը տարածվելու է այլ երկրների հայկական դպրոցներում սովորող ՀՀ քաղաքացիների վրա, նախարարը պատասխանել է, որ նախագծով առաջարկվող կարգավորումները վերաբերելու են ինչպես Հայաստանում, այնպես էլ օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաեւ հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողներ ՀՀ քաղաքացիներին:

Հարակից զեկուցող ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ **Հակոբ Ասլանյանը** նշել է, որ հանձնաժողովը նախագծին տվել է դրական եզրակացություն՝ վստահեցնելով, որ առաջարկվող փոփոխություններով ավելի պաշտպանված կլինի սովորողների կրթության իրավունքը:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մայր Աթոռ

Վեհափառն ընդունեց հաջողություններ գրանցած աշակերտներին

Մայիսի 22-ին **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին երկրորդ** Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայոց Եկեղեցու պատմություն առարկայի հանրապետական օլիմպիադայում մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտներին:

Հանդիպման սկզբում Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Հոգեշնորհ **Տեր Զաքարիա ծայրագույն վարդապետ Բաղումյանը,** հայցելով Նորին Սրբության օրհնությունը, ներկայացրեց այս տարվա ՀԵՊ առարկայի օլիմպիադայի արդյունքներն ու արձանագրած հաջողությունները՝ շեշտելով առարկայի սիրված լինելն ու կարեւոր դերակատարությունը մատաղ սերնդի ազգային-հոգեւոր կրթության եւ դաստիարակության գործում:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն, Իր սերն ու օրհնությունը փոխանցելով ներկաներին, շնորհավորեց օլիմպիադայի մրցանակակիրներին՝ ուրախությամբ արձանագրելով, որ առարկան կարեւոր ձեռքբերում է նորանկախ հանրապետության կրթության ոլորտում:

Նորին Սրբությունը ցավով նկատեց, որ կրթական չափորոշիչների փոփոխությամբ դպրոցներում դադարելու է առարկայի դասավանդումը՝ հույս հայտնելով, որ ՀՀ իշխանություններն անդրադարձ կունենան այդ որոշմանն ու մեր զավակներին հնարավորություն կընձեռնվի ստանալ հոգեւոր գիտելիքներ եւ դաստիարակություն՝ հավատարիմ մնալու նախնյաց ժառանգությանն ու ազգային արժեհամակարգին:

Հայոց Հովվապետն աշակերտներին հորդորեց ջերմեռանդությամբ եւ նախանձախնդրորեն շարունակեն իրենց ուսումնառությունը, ամբարեն նոր գիտելիքներ եւ եկեղեցասիրությամբ ու հայրենաճանաչությամբ իրենց մեջ զորացնեն նվիրումի ոգին՝ ի փառս հայրենիքի եւ Մայր Եկեղեցու:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը նաեւ իր գնահատանքը փոխանցեց Հայր Զաքարիային եւ ՀԵՊ ուսուցիչներին՝ պատանի հայորդիներին տարիներ շարունակ քրիստոնեական եւ ազգային արժեհամակարգով կրթելու ու դաստիարակելու իրենց կատարած նվիրյալ աշխատանքի համար՝ ընդգծելով, որ դրա վառ վկայությունը աշակերտների արձանագրած հաջողություններն են:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց աշակերտներին հետաքրքրող հարցերին:

Արցախ

Մայիսի 28-ի հեղինակը ողջ հայությունն է

Մայիսի 29-ին Ստեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատում կայացած հանդիսավոր միջոցառումը նվիրված էր Հայաստանի առաջին Հանրապետության կազմավորման **105**-ամյակին:

Երեկոն մեկնարկել է հայ ժողովրդի բոլոր պատերազմներում անմահացած հերոսների հիշատակին հարգանքի տուրքով, այնուհետեւ *«Մռակած»* պետական կամերային երգչախմբի կատարմամբ հնչել են ՀՀ եւ ԱՀ պետական օրհներգերը:

Դահլիճում էին ԱՀ նախագահ **Արայիկ Հարությունյանը,** ԱՀ երկրորդ եւ երրորդ նախագահներ **Արկադի Ղուկասյանն** ու **Բակո Սահակյանը,** ԱՀ ԱԺ նախագահ **Արթուր Թովմասյանը,** պաշտոնատար այլ անձինք:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի թեմի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոնի տնօրեն **Տեր Վաչագան քահանա Գյուրջյանը,** ներկայացնելով թեմական առաջնորդի օրհնության խոսքը, անդրադարձել է մայիսյան հերոսամարտերին արցախցիների մասնակցությանը: *«Արցախից մահապարտների գունդը Դանիել բեկ Փիրումյանի գլխավորությամբ մասնակցել է այդ պայքարին, իսկ Մայր Աթոռի միաբան հոգեւորականներից կազմված մահապարտների գունդը եւս ղեկավարում էր ծննդով արցախցի Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանցը: Սա նշանակում է, որ Արցախն անմնացորդ նվիրված էր հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին, որովհետեւ այլ կերպ լինել չէր կարող»,-* ասել է նա:

ԱՀ ԿԳՄՍ փոխնախարար **Լեռնիկ Հովհաննիսյանն** իր ելույթում նշել է, որ Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծումը 20-րդ դարի հայոց պատմության ամենանշանավոր իրադարձությունն էր: *«Պատահական չէ, որ Գարեգին Նժդեհը մայիսի 28-ի հեղինակ է կոչել ողջ հայությանը՝ իր տառապանքներով, կամքով եւ ոգով»,-* ասել է նա:

Միջոցառմանը հնչած ելույթներն ուղեկցվել են համերգային ծրագրով, որին մասնակցում էին Ստեփանակերտի *«Սոսե»* մանկապարտեզի երեխաները, *«Արցախի ձայներ»* համույթը, մանկական ստեղծագործության կենտրոնի սաները, գեղարվեստական այլ կոլեկտիվներ եւ անհատ կատարողներ:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ք. Ստեփանակերտ, մեր սեփական թղթակից

Դիմորդ - 2023

Հաստատվել է միասնական քննությունների քննական կենտրոնների ցանկը

Գնահատման եւ թեստավորման կենտրոնի տնօրենի հրամանով՝ հաստատվել է **2023-2024** ուստարվա բուհերի ընդունելության միասնական քննությունների Երեւանի եւ մարզերի քննական կենտրոնների ցանկը: Քննական կենտրոնները **40**-ն են՝ **26**-ը մարզերում, **14**-ը՝ մայրաքաղաքում:

Երեւան

1) Երեւանի հ. 11 հիմնական դպրոց
2) Երեւանի հ. 14 հիմնական դպրոց
3) Երեւանի հ. 29 ավագ դպրոց
4) Երեւանի հ. 57 հիմնական դպրոց
5) Երեւանի հ. 62 ավագ դպրոց
6) Երեւանի հ. 88 հիմնական դպրոց
7) Երեւանի հ. 118 ավագ դպրոց
8) Երեւանի հ. 135 հիմնական դպրոց
9) Երեւանի հ. 155 հիմնական դպրոց
10) Երեւանի հ. 168 հիմնական դպրոց
11) Երեւանի հ. 170 ավագ դպրոց
12) Երեւանի հ. 189 ավագ դպրոց
13) Երեւանի հ. 190 ավագ դպրոց
14) Երեւանի հ. 200 հիմնական դպրոց

Արագածոտնի մարզ

15) Աշտարակի հ. 3 հիմնական դպրոց
16) Աշտարակի հ. 5 ավագ դպրոց

Արարատի մարզ

17) Արտաշատի հ. 1 հիմնական դպրոց
18) Արտաշատի հ. 4 հիմնական դպրոց
19) Արտաշատի հ. 5 հիմնական դպրոց

Արմավիրի մարզ

20) Արմավիրի հ. 1 ավագ դպրոց
21) Արմավիրի հ. 5 հիմնական դպրոց
22) Արմավիրի հ. 10 հիմնական դպրոց

Գեղարքունիքի մարզ

23) Գավառի հ. 2 միջնակարգ դպրոց
24) Գավառի հ. 3 հիմնական դպրոց
25) Գավառի հ. 5 հիմնական դպրոց

Լոռու մարզ

26) Վանաձորի հ. 5 ավագ դպրոց
27) Վանաձորի հ. 16 հիմնական դպրոց
28) Վանաձորի հ. 24 միջնակարգ դպրոց

Կոտայքի մարզ

29) Չարենցավանի հ. 1 ավագ դպրոց
30) Չարենցավանի հ. 3 հիմնական դպրոց
31) Չարենցավանի հ. 4 հիմնական դպրոց
32) Չարենցավանի հ. 5 հիմնական դպրոց

Շիրակի մարզ

33) Գյումրու հ. 10 հիմնական դպրոց
34) Գյումրու հ. 11 հիմնական դպրոց
35) Գյումրու հ. 21 հիմնական դպրոց

Սյունիքի մարզ

36) Գորիսի հ. 3 հիմնական դպրոց
37) Կապանի հ. 6 հիմնական դպրոց

Վայոց ձորի մարզ

38) Եղեգնաձորի ավագ դպրոց

Տավուշի մարզ

39) Իջեւանի ավագ դպրոց
40) Իջեւանի հ. 4 հիմնական դպրոց

Հիշեցնենք նաեւ, որ **2023-2024** ուստարվա բուհերի ընդունելության **միասնական քննությունները** կմեկնարկեն **հունիսի 9**-ին եւ կավարտվեն **հունիսի 27**-ին:

Միասնական քննությունների համար, ըստ առարկաների, սահմանված են հետեւյալ օրերը.

09.06.2023 թ. - *«Քիմիա», «Ռուսաց լեզու»,*
13.06.2023 թ. - *«Օտար լեզուներ»,*
16.06.2023 թ. - *«Մաթեմատիկա»,*
20.06.2023 թ. - *«Հայոց լեզու եւ հայ գրականություն»,*
23.06.2023 թ. - *«Կենսաբանություն», «Աշխարհագրություն»,*
27.06.2023 թ. - *«Հայոց պատմություն», «Ֆիզիկա»:*

Կընդգրկվի 107 դպրոց եւ կրթահամալիր

սկիզբը՝ էջ 6

Ժաննա Անդրեասյանը հավելել է, որ առաջիկայում նման որոշումներ կլինեն նաեւ Շիրակի, Լոռու, Վայոց ձորի, Տավուշի եւ Երեւանի մասով՝ ամբողջացնելով ողջ հանրապետությունը:

Փոխվարչապետ **Տիգրան Խաչատրյանը** եւս կարեւորել է որոշման ընդունումը՝ նշելով, որ նշյալ 107 հաստատության շինարարական աշխատանքների ծավալը կկազմի առնվազն 150 մլրդ դրամ. *«Իհարկե, միայն մեկ տարվա ընթացքում չեն իրականացվի շինարարական աշխատանքները, որովհետեւ յուրաքանչյուր դպրոցի կառուցման համար պահանջվում է շուրջ 2 տարի: Սակայն, սա փաստում է, որ 2024 եւ 2025 թթ. այս ուղղությամբ շինարարական աշխատանքների եւ կառավարության հատկացրած կապիտալ ծախսերի ծավալը զգալիորեն ավելանալու է,-* նշել է փոխվարչապետը՝ շեշտելով, որ բացի այս հաստատություններից՝ կան տասնյակ դպրոցներ, որոնք ներկայում գտնվում են շինարարական աշխատանքների փուլում, եւ 2023, 2024 եւ 2025 թվականներին կունենանք բոլորովին նոր եւ ժամանակակից գույքով ապահովված դպրոցներ:

Քաղաքաշինության կոմիտեի նախագահ **Արմեն Ղուլարյանը** տեղեկացրել է՝ նախատեսվում է այս տարվա ընթացքում ավարտվել նախագծման աշխատանքները եւ այնուհետեւ ձեռնամուխ լինել կառուցապատմանը:

Նշենք, որ կրթահամալիրների ստեղծման ծրագրում ուսհաստատությունների ընդգրկման նախապայմաններն են դպրոցների փոքրաքանակ աշակերտական համակազմը, նախադպրոցական ծառայությունների բացակայությունը եւ շահառու երեխաների փոքր թիվը:

Նշված նախապայմաններից ելնելով՝ ՀՀ Արագածոտնի մարզում ընտրվել է 7, Արմավիրի մարզում՝ 4, իսկ Գեղարքունիքի մարզում՝ 9 բնակավայր: Այդ բնակավայրերն են. Արագածոտնում՝ Ագարակավան, Ռյա Թազա, Նոր-Ամանոս, Ճարճակիս, Զարինջա, Վարդենուտ, Կարին, Արմավիրում՝ Երասխահուն, Վարդանաշեն, Երվանդաշատ, Նոր Արտագերս, Գեղարքունիքում՝ Թթուջուր, Մարտունի, Դպրաբակ, Շատվան, Կախակն, Արեգուն, Փոքր Մասրիկ, Մաքենիս, Մադինա:

Կրթահամալիրների ստեղծման ծրագրի շրջանակում մարզեր կատարած այցերի եւ իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում որոշվել է՝ այն բնակավայրերի համար, որտեղի դպրոցների աշակերտական համակազմը մեծ է, կառուցել դպրոցների նոր շենքեր (Արագածոտնի մարզում՝ 8, Արմավիրի մարզում՝ 8, իսկ Գեղարքունիքի մարզում՝ 6 բնակավայր): Այդ դպրոցներն են. Արագածոտնում՝ Ապարանի Վ.Եղիազարյան անվան թիվ 1 հիմնական դպրոց (կկառուցվի միջնակարգ դպրոց), Թալինի թիվ 2 հիմնական դպրոց (կկառուցվի միջնակարգ դպրոց), Ներքին Սասնաշենի միջնակարգ դպրոց, Աշտարակի Վ.Պետրոսյան անվան հիմնական դպրոց, Ալագյազի միջնակարգ դպրոց, Օշականի Մ. Մաշտոցի անվան միջնակարգ դպրոց, Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց, Նոր Եդեսիայի Ն. Շնորհալու անվան միջնակարգ դպրոց, Արմավիրում՝ Ջրառատի Թ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց, Արաքսի Ջ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց, Գեղակերտի միջնակարգ դպրոց, Վաղարշապատի Վ. Ռշտունու անվան թիվ 11 հիմնական դպրոց, Վաղարշապատի Ե. Օտյանի անվ. թիվ 7 հիմնական դպրոց, Վանանդի միջնակարգ դպրոց, Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց, Ամբերդի Հ. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց, Գեղարքունիքում՝ Գավառի թիվ 5 հիմնական դպրոց, Ծովինարի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց, Սեւանի Վ. Կարապետյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց, Լիճքի հիմնական դպրոց (կկառուցվի միջնակարգ դպրոց), Վարդենիսի թիվ 3 հիմնական դպրոց, Գավառի Գեորգի Մնացականյանի թիվ 7 միջնակարգ դպրոց:

Հ. Հ.

Նախագիծ

Լրացումներ եւ փոփոխություններ՝ հանրակրթության պետական չափորոշչում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթության պետական չափորոշչի ձեւավորման եւ հաստատման կարգում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագիծը:

Հանրակրթության պետական չափորոշչում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու նպատակը միտված է 2021-2022 եւ 2022-2023 ուստարիներին Տավուշի մարզի 2-3-րդ, 5-6-րդ, 7-8-րդ եւ 10-11-րդ դասարաններում նոր չափորոշչի ներդրման արդյունքում ի հայտ եկած խնդիրների լուծմանը:

Մասնավորապես՝ 2021 թվականից փաստաթղթի ուժի մեջ մտնելուց հետո դրա ներդրման գործընթացում ծագած բովանդակային խնդիրներին լուծում տալու եւ որոշ ձեւակերպումներ փոփոխելու անհրաժեշտություն է առաջացել, որոնք ծագել են ինչպես չափորոշչի ու դրանից բխող առարկայական չափորոշիչների եւ ծրագրերի գործարկման, այնպես էլ ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտերի ընդունման արդյունքում (օրինակ՝ սովորողների գնահատման, հաստատությունների ֆինանսավորման, նախագծային ուսուցման եւ այլն):

Ըստ այդմ՝ որոշման մեջ բաց է անհատական (ընտրովի) բաղադրիչին վերաբերող կետը, ինչպես նաեւ լրացման կարիք ունի սովորողի անհատական ուսուցման պլանով սահմանված կրթության առանձնահատուկ պայմանների՝ ներառյալ խելամիտ հարմա-ռեցումների (այդ թվում՝ մատչելի ձեւաչափերով մշակած ուսումնական նյութեր, բանավոր եւ գրավոր հաղորդակցման այլընտրանքային միջոցներ, ուսուցման անհատական տեխնիկական միջոցներ) ապահովման վերաբերյալ կարգավորումը:

Խմբագրման անհրաժեշտություն է առաջացել նաեւ հենքային ուսումնական պլանի մասով, որը վերածեւակերպվել է *«ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքը եւ ուսումնական պլանի կազմման կանոններ»:* Հաշվի է առնվել, որ նոր չափորոշչի տրամաբանությամբ օրինակելի կամ հենքային ուսումնական պլանները փոխարինվելու են ընդհանրական կանոններով, որից օգտվելով՝ յուրաքանչյուր հաստատություն պետք է կազմի իր ուսումնական պլանը՝ սովորողների ընտրությամբ, հաստատության առանձնահատկություններից ելնելով: Խմբագրման անհրաժեշտություն է առաջացել նաեւ ուստարվա ընթացքում սովորողների գնահատմանը վերաբերող ձեւակերպումների, ուսումնական ծրագրերին, խմբակներին եւ նախագծերին, ուսումնական բնագավառներին հատկացվող ժամաքանակների մասով:

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է սովորողների ուսումնառությունը կազմակերպել վերանայված պետական չափորոշչով: Համաձայն նոր չափորոշչի ներդրման ճանապարհային քարտեզի՝ 2023-2024 ուսումնական տարում վերանայված չափորոշիչներն ու ծրագրերը կկիրառվեն ՀՀ բոլոր ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարաններում:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Համաչափ զարգացում

Այց Շիրակի մարզի մի շարք հաստատություններ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանն** աշխատանքային այց է կատարել Շիրակի մարզի մի շարք հանրակրթական եւ նախնական ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ:

Այցի նպատակն էր՝ ծանոթանալ մարզի կրթօջախների պայմաններին եւ քննարկել ուսումնական տարվա ավարտի հետ կապված ընթացիկ մի շարք հարցեր:

Նախարարի տեղակալի առաջին կանգառը Ազատանի միջնակարգ դպրոցն էր, որի հետնամասում կառուցվում է նոր մասնաշենք: Արաքսիա Սվաջյանը ծանոթացել է աշխատանքների ընթացքին, ինչպես նաեւ զրուցել դպրոցի տնօրինության, աշխատակիցների եւ աշակերտների հետ, պատասխանել նրանց հուզող հարցերին:

Նախարարի տեղակալը եղել է նաեւ Ազատանի մանկապարտեզում, որտեղ եւս ծանոթացել է ուսհաստատության ֆիզիկական միջավայրին ու ենթակառուցվածքներին, ինչպես նաեւ զրուցել աշխատակիցների հետ: Արաքսիա Սվաջյանը վերջիններիս հորդորել է դիմել նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար սահմանված տարակարգի համար, որը նրանց հավելավճար ստանալու հնարավորություն կտա:

Նախարարի տեղակալի հաջորդ կանգառը Գյումրու *«Ֆոտոն»* վարժարանն էր: Արաքսիա Սվաջյանը շրջել է ուսհաստատությունում, ծանոթացել դրա ենթակառուցվածքներին եւ գույքային հագեցվածությանը: Աշակերտների հետ զրույցում նախարարի տեղակալը նշել է, որ այս տարվանից ողջ հանրապետությունում ներդրվելու է հանրակրթության նոր չափորոշիչը, որում կարեւորված է նաեւ աշակերտների մասնագիտական կողմնորոշման բաղադրիչը: Աշակերտներին հետաքրքրել են նաեւ ՀՀ հանրակրթական ծրագրերի համադրելիությունը միջազգային ծրագրերին, ԲՏԵՄ առարկաների եւ լաբորատորիաների հագեցվածության հարցերը, որոնց շուրջ ծավալվել է քննարկում:

Նախարարի տեղակալը եղել է նաեւ նույն տարածքում գործող՝ Գյումրու թիվ 37 ավագ դպրոցում, ծանոթացել հաստատության պայմաններին ու ֆիզիկական միջավայրին: Ուսուցիչների հետ հանդիպմանը Արաքսիա Սվաջյանը նրանց հորդորել է մասնակցել կամավոր ատեստավորման գործընթացին եւ օգտվել աշխատավարձի բարձրացման հնարավորությունից:

Մարզային այցի ընթացքում նախարարի տեղակալը եղել է նաեւ ՄԿՈՒ հաստատություններում: Նա այցելել է Գյումրու թիվ 1 եւ թիվ 3 արհեստագործական ուսումնարաններ, ինչպես նաեւ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Գյումրու մասնաճյուղի միջին մասնագիտական կրթական ծրագիր:

Արաքսիա Սվաջյանը ծանոթացել է նշյալ ուսհաստատությունների շենքային պայմաններին, ուսուցանվող մասնագիտություններին եւ առկա խնդիրներին: Հաշվի առնելով ՀՀ կառավարության ծրագիրը՝ Արաքսիա Սվաջյանն անդրադարձել է մասնագիտական ծրագրերի՝ առավել նպատակային իրականացմանը եւ համապատասխանեցմանը տվյալ մարզի սոցիալ-տնտեսական կարիքներին:

Նախարարի տեղակալը խոսել է նաեւ հաջորդ տարի նախատեսվող ՄԿՈՒ հաստատությունների աշխատակիցների ատեստավորման գործընթացի մասին, ինչպես նաեւ հորդորել հանրակրթական առարկաներ դասավանդող մանկավարժներին՝ մասնակցելու առաջիկա կամավոր ատեստավորմանը: Արաքսիա Սվաջյանն անդրադարձել է նաեւ միայն Գյումրու թիվ 1 եւ թիվ 3 արհեստագործական ուսումնարաններում դասավանդվող մասնագիտություններին եւ դրանցով զբաղվածության հնարավորություններին՝ հետաքրքրելով, թե պետության կողմից հավելյալ ինչպիսի աջակցության կարիք կա՝ զարգացնելու նման մասնագիտությունները: Փոխնախարարը լսել է նաեւ ՄԿՈՒ հաստատությունների աշխատակիցների դիտարկումները վերոնշյալ հարցերի շուրջ եւ պատասխանել նրանց հուզող հարցերին:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր

Վերջին դասը՝ յուրատեսակ ցուցահանդեսով

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը** Երեւանի քաղաքապետարանում ներկա է եղել *«Հակոբ Կոջոյան»* կրթահամալիրի շրջանավարտների *«Վերջին դաս»* միջոցառմանը:

Միջոցառմանը մասնակցել եւ շրջանավարտներին ողջունել են նաեւ Երեւանի քաղաքապետի պաշտոնակատար եւ առաջին տեղակալ **Լեւոն Հովհաննիսյանը,** ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան **Անն Լույոն** եւ *«Հակոբ Կոջոյան»* կրթահամալիրի տնօրեն **Ռուզաննա Երեմյանը:**

Կրթահամալիրն այս տարի 72 շրջանավարտ ունի եւ ավանդաբար վերջին զանգն ազդարարում է ցուցահանդեսով: Այս տարի կազմակերպված ցուցահանդեսը կրում էր *«Ես չեմ եղել Փարիզում»* խորագիրը. շրջանավարտները յուրովի պատկերել էին իրենց պատկերացրած Փարիզն ու սերը Ֆրանսիայի հանդեպ՝ արտացոլելով հայ-ֆրանսիական բարեկամական հարաբերությունները: Կրթահամալիրի սաները տարատեսակ առարկաներից ստեղծել էին նաեւ էյֆելյան աշտարակի քանդակները:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը շնորհավորել է կրթահամալիրի շրջանավարտներին եւ նրանց ծնողներին հիշարժան իրադարձության առթիվ:

«Այսօր պատիվ ունեմ ներկա լինելու վերջին դասի երրորդ արարողությանը եւ հիմա ավելի համոզվեցի, որ դպրոցն իր դրոշմն է թողնում աշակերտների եւ շրջանավարտների վրա: Վստահ եմ՝ այն ազդեցությունը, որն ունեցել է «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրն իր սաների վրա, ամբողջ կյանքում նրանց տանելու է դեպի լուսավոր ապագա, հաջողություններ, մեծ ձեռքբերումներ ու ստեղծարարություն: Ցուցահանդեսը, որն այստեղ ներկայացված է, շատ հետաքրքիր ու խոստումնալից է»,- ասել է Արաքսիա Սվաջյանը՝ շրջանավարտներին մաղթելով նվիրական երազանքների իրականացում՝ հօգուտ մեր երկրի, քաղաքի ու պետության զարգացման:

Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ, քաղաքապետի պաշտոնակատար Լեւոն Հովհաննիսյանը եւս շնորհավորել է շրջանավարտներին. *«Տեսնում եմ, որ բոլորդ իսկապես ուրախ եք: Կարծում եմ՝ հենց այդպես էլ պետք է անցկացնել վերջին զանգը, որովհետեւ ի վերջո, դպրոցի հետ կապը, վստահ եմ, միշտ լինելու է: Սա բացառիկ կրթահամալիր է եւ կրթում է տաղանդավոր ու խոստումնալից երեխաների, որոնք մեր վաղվա արժանապատիվ քաղաքացիներն են լինելու: Շնորհավորում եմ եւ մաղթում եմ բարի երթ»:*

ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Անն Լույոն, տպավորված շրջանավարտների աշխատանքների որակով, նրանց հետագա հաջողություններ է մաղթել. *«Իսկապես շատ տպավորված եմ այն ամենով, ինչ տեսա այստեղ: Ինչպես կտավներն, այնպես էլ էյֆելյան աշտարակի տարատեսակ քանդակները շատ հետաքրքիր ու տպավորիչ են: Գիտեի, որ հայ երիտասարդները շատ ստեղծագործ ու տաղանդավոր են, բայց որ այսքան, չէի պատկերացնում: Նրանց աշխատանքները խորհրդանշում են Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ բարեկամությունը: Հույս ունեմ՝ այս բոլոր երիտասարդները կսովորեն ֆրանսերեն եւ մի օր կլինեն Փարիզում»:*

Ողջույնի խոսքով հանդես է եկել նաեւ կրթահամալիրի տնօրեն Ռուզաննա Երեմյանը:

«Երեւանը մեր տունն է, եւ Երեւանը սիրող մարդիկ մեր կողքին են, որովհետեւ գիտեն, որ մեր շրջանավարտները որոշ ժամանակ անց ծառայելու են Երեւանի եւ առհասարակ Հայաստանի Հանրապետության զարգացմանը: Սա է պատճառը, որ այս տարի մեր ավարտական միջոցառումը կազմակերպել էինք Երեւանի քաղաքապետարանում»,- նշել է Ռուզաննա Երեմյանը՝ շրջանավարտներին մաղթելով նույնքան գունագեղ կյանք, ինչպիսին, որ այն եղել է կրթահամալիրում:

Արցախ

Արձագանքներ՝ բոլորիս հոգիներում

Շրջափակված Արցախում վերջին զանգի ավանդական հանդիսությունները ներդպրոցական էին, բայց շրջանավարտների՝ բոլոր սահմանները հատող ուրախությունն իր արձագանքն ուներ բոլորիս հոգում: Այս տարվա շրջանավարտներն անցել են դաժան փորձությունների միջով՝ համավարակ, դաժան պատերազմ, շրջափակում:

«Արագ փոփոխվող աշխարհը ենթադրում է նոր գաղափարներ, կյանքի հանդեպ արդիական մոտեցումներ եւ անհրաժեշտություն է որակյալ ու շարունակական կրթությունը: Առավել եւս մեր հայրենիքի՝ վիրավոր Արցախի ապաքինման ճանապարհին անհնար է արդյունավետություն ապահովել առանց արհեստավարժ եւ մրցունակ մասնագետների, որոնց շարքերը, համոզված եմ, մոտ ապագայում համալրելու եք նաեւ դուք, եւ մեր փոքրիկ հայրենիքի բարեկեցության եւ բարգավաճման գործում, նշանակալի է լինելու նաեւ ձեր ներդրումը»,- շրջանավարտներին ուղղված իր շնորհավորական ուղերձում նշել է ԱՀ ԿԳՄՍ նախարար **Նորայր Մկրտչյանը:**

Մեզ հետ ունեցած զրույցի ընթացքում գերատեսչության ղեկավարը նշել է, որ շրջանավարտների թիվը նախորդ տարվա համեմատ գրեթե անփոփոխ է: Նրանց մի մասը դիմել է միջին եւ նախնական մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատություններ, մի մասը հայտագրվել է՝ հայաստանյան բուհեր ընդունվելու համար:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ք. Ստեփանակերտ,
մեր սեփական թղթակից

Քրիստափոր Կարա-Մուրզա - 170

Երգչախմբային հոբելյանական փառատոն

Երաժշտական ցանկացած իրադարձություն տոն է երաժշտագետ եւ երաժշտասեր հասարակության համար:

Հայաստանի Կոմպոզիտորների միությունը Արարատյան Հայրապետական Թեմի գործընկերությամբ կազմակերպել է Քրիստափոր Կարա-Մուրզայի 170-ամյակին նվիրված երգչախմբային փառատոն:

Փառատոնի մեկնարկը տրվել է Կոմպոզիտորների միության համերգասրահում: Փառատոնի բացվեց Արարատյան Հայրապետական Թեմի Առաջնորդական Փոխանորդ Գերաշնորհ **Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի** օրհնությամբ եւ աղոթքով, որից հետո **Հովհաննես սարկավագ Ներսեսյանը** լսարանին ներկայացրեց Կարա-Մուրզայի քառաձայն պատարագի մեկնությունը, այնուհետեւ ներածական խոսքով հանդես եկավ երաժշտագետ **Նարինե Ավետիսյանը,** որը փառատոնի ընթացքում ներկայացրեց Կարա-Մուրզայի կենսագրության եւ ժառանգության վերաբերյալ կարեւոր փաստեր:

Փառատոնի մեկնարկային փուլը իրենց ներկայությամբ պատվեցին Հայաստանի Կոմպոզիտորների միության նախագահ **Արամ Սաթյանը,** ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աննա Ասատրյանը,** կոմպոզիտորներ **Ավետիս Բերբերյանը, Ստեփան Բաբաթորոսյանը:**

Համերգաշրջանի այս փուլին մասնակցում էին *«Աննա Մայիլյան»* վոկալ տրիոն, դաշնակահար **Էլեն Կիրակոսյանը,** Երեւանի Ղ. Սարյանի անվան արվեստի դպրոցի երգչախումբը (խմբավար՝ **Գրիգոր Հարությունյան**), Երեւանի Արմեն Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի երգչախումբը (խմբավար՝ **Ռուբեն Կարասեֆերյան**) եւ Երեւանի Հ. Դանիելյանի անվան արվեստի դպրոցի երգչախումբը (խմբավար՝ **Հասմիկ Ամատունի-Թորգոմյան**):

Փառատոնի բացման հանդիսավոր արարողությանը հնչեցին Քրիստափոր Կարա-Մուրզայի, Ա. Բաբաջանյանի, Է. Հովհաննիսյանի, Ռ. Պետրոսյանի, Ս. Լուսիկյանի, Թ. Ալթունյանի, Ա. Սաթյանի, Ռ. Ամիրխանյանի, Մ. Մավիսակալյանի, Ս. Շաքարյանի, Գ. Հարությունյանի խմբերգային ստեղծագործություններն ու մշակումները:

Համերգի մեկնարկային օրը արդյունավետ էր Կարա-Մուրզայի անձի եւ գործունեության հանրայնացման, ինչպես նաեւ հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների հնչեցման առումներով:

Փառատոնը եռափուլ համերգաշար է, որի երկրորդ փուլը նույնպես կայացավ Հայաստանի Կոմպոզիտորների միության համերգասրահում: Այս անգամ եւս համերգը հանդիսապետում էր Արարատյան Հայրապետական Թեմի Առաջնորդական Փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը: Համերգին ներկա էր կոմպոզիտորների եւ արվեստագետների նույն հանձնախումբը, որին միացել էին նաեւ Հայաստանի Երաժշտական ընկերության նախագահ, պրոֆեսոր **Դավիթ Ղազարյանը** եւ բանաստեղծ **Լեւոն Բլբուլյանը:**

Փառատոնի երկրորդ փուլի համերգին մասնակցում էին բացառապես Երեւանի հանրակրթական դպրոցների երգչախմբերը. Լեւոն Շանթի անվան հ. 4 դպրոցի (խմբավար՝ **Գայանե Բարսեղյան**), *«Վարդանանց ասպետներ»* հ. 106 հիմնական դպրոցի (խմբավար՝ **Ներսես Մարգարյան**), Գալինա Ստարովոյտովայի անվան հ. 177 հիմնական դպրոցի (խմբավար՝ **Գայանե Սարգսյան**), Հենրիկ Խաչատրյանի անվան հ. 199 հիմնական դպրոցի (խմբավար՝ **Լիանանա Գեւորգյան**), Լեոնիդ Ազգալդյանի անվան հ. 200 դպրոցի (խմբավար՝ **Անի Եղիազարյան**), Երեւանի հ. 156 դպրոցի (խմբավար՝ **Շուշանիկ Վասակյան**):

Համերգի ընթացքում հնչեցին Քրիստափոր Կարա-Մուրզայի, Կոմիտաս վարդապետի, Կ. Օրբելյանի, Է. Միհրանյանի, Մ. Վարդազարյանի, Ս. Լուսիկյանի, Ռ. Պետրոսյանի, Մ. Մավիսակալյանի եւ Ժ. Բլբուլյանի ստեղծագործությունները:

Փառատոնը կամփոփվի Առնո Բաբաջանյանի անվան ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում:

Փառատոնի նպատակն է՝ հանրայնացնել հայ խմբերգային արվեստի նախահայր Քրիստափոր Կարա-Մուրզայի թողած հսկայական ժառանգությունը, տարածել հայ դասական եւ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները, ինչպես նաեւ մանկական երգչախմբերի մեջ սեր արթնացնել դեպի հայ խմբերգային արվեստը:

Համերգային այս հանգրվանում փառատոնի կազմակերպումը համարում ենք արդյունավետ եւ նպատակային: Փառատոնը մի քայլ է՝ ուղղված երգչախմբերի համախմբմանը, արվեստի, երաժշտական եւ հանրակրթական դպրոցների համագործակցությանը՝ ի շահ հայ երաժշտական արվեստի եւ հայկական մշակույթի:

Գրիգոր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«100 գաղափար Հայաստանի համար»

Ամփոփվել է հանրապետական երիտասարդական մրցույթը

Ամփոփվել է 2023 թվականի *«100 գաղափար Հայաստանի համար»* նորարարական նախագծերի եւ գիտատեխնիկական մշակումների հանրապետական երիտասարդական մրցույթը. տեղի է ունեցել հաղթողների պարգեւատրման արարողությունը:

Միջոցառմանը ներկա են եղել ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը,** նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը,** Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարի տեղակալ **Ավետ Պողոսյանը,** Պաշտպանության նախարարի տեղակալ **Արման Սարգսյանը,** էկոնոմիկայի նախարարի տեղակալ **Արման Խոջոյանը,** ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ **Տիգրան Գաբրիելյանը,** ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության եւ սփյուռքի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ **Թագուհի Ղազարյանը,** պաշտոնատար այլ անձինք, միջազգային եւ տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

«Այս մրցույթի առանցքային իմաստներից մեկը երիտասարդների շրջանում նորարար գաղափարների ներկայացման խրախուսումն է՝ որպես կրթական գործընթացի անխուսափելի բաղադրիչ»,- շնորհավորելով մրցույթի մասնակիցներին՝ ասել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը եւ կոչ արել երիտասարդներին չվախենալ իրենց մտքերն ու գաղափարները բարձրաձայնելուց՝ դա դարձնելով իրենց առօրյայի մաս:

Ըստ նախարարի՝ կազմկոմիտեի եւ փորձագիտական հանձնաժողովի աշխատանքը ցույց է տալիս, որ մրցույթի հիմքում դրված են որակի գնահատման խիստ չափանիշներ. *«Մասնագիտական կարծիքը մասնակիցների համար որոշ առումով նաեւ կրթական փուլ է: Մեզ համար էլ այն կարեւոր ֆիլտր է՝ գտնելու գաղափարներից լավագույնը՝ որպես թե՝ անձի, թե՝ հանրության զարգացման լավագույն ճանապարհներից մեկը»:*

Նախարարը նշել է, որ տարեցտարի աճում է հետաքրքրությունը մրցույթի նկատմամբ. նախորդ տարի ներկայացվել է 54 հայտ, այս տարի՝ 66:

Ժաննա Անդրեասյանը հորդորել է մասնակիցներին դառնալ դեսպաններ իրենց տարեկիցների շրջանում՝ տարածելու եւ խրախուսելու մրցույթին մասնակցությունը:

Մասնակիցներին շնորհավորել է նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը. *«Սա իսկապես նորարարությունն ու երիտասարդների մասնակցությունը քաջալերող ծրագիր է, որտեղ կարեւորվում է ներկայացված հայտերի ոչ միայն գիտական բաղադրիչը, այլեւ սոցիալական կիրառելիությունը: Սա երիտասարդներին հնարավորություն է տալիս ներկայացնելու ապագային միտված իրենց գաղափարները՝ հանրային կյանքն ավելի հեշտ եւ արդյունավետ դարձնելու համար»:*

Փոխնախարարը նշել է, որ մրցույթի հաղթողները հնարավորություն ունեն նաեւ մասնակցելու *«100 գաղափար ԱՊՀ-ի համար»* միջազգային երիտասարդական մրցույթին, որը տեղի է ունենում 2 տարվա պարբերականությամբ: Լավագույն գաղափարները դիտարկվում են ԱՊՀ կազմկոմիտեի եզրափակիչ փուլի համար, եւ լավագույն հայտերն արժանանում են տարածաշրջանային մրցանակի:

«100 գաղափար Հայաստանի համար» մրցույթն անցկացվում է երիտասարդների նորարարական մտածողությունը զարգացնելու, ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծման գործընթացում երիտասարդներին ներգրավելու, գիտատեխնիկական մշակումներ եւ նորարարական նախագծեր իրականացնելու քաղաքացիական նախաձեռնությունների խթանման նպատակով:

Մրցույթն անցկացվել է 5 անվանակարգում, որոնց շրջանակում ներկայացվել է 66 հայտ: Հաղթող է ճանաչվել 5 հայտ, որոնցից յուրաքանչյուրն արժանացել է 500.000-ական դրամի:

Միայն *«Ճարտարապետական գիտություններ»* անվանակարգում մասնակիցները չեն հաղթահարել սահմանված չափանիշների շեմը: Կազմկոմիտեի եւ փորձագիտական հանձնաժողովի որոշմամբ՝ *«Գյուղատնտեսական գիտություններ»* անվանակարգում հաղթող է ճանաչվել 2 հայտ:

«100 գաղափար Հայաստանի համար» մրցույթի հինգ անվանակարգում հաղթող գաղափարներն են՝

1. Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ՝ **Նունե Մկրտչյան, Սիլվա Մովսիսյան, Մաքսիմ Գրիգորյան,** նախագիծը՝ *«Օպտիկական տատանագրիչ»,*
2. Գյուղատնտեսական գիտություններ (այդ թվում՝ կենսաբանական գիտություններ)՝ **Անի Հարությունյան, Ջեմմա Մանոյան, Աստղիկ Համբարձումյան** եւ **Դիանա Հակոբյան,** նախագիծը՝ *«Ֆիկոցիանինից սինթեզված նանոմասնիկները՝ խոստումնալից հակաբակտերիական միջոց»,*
3. Գյուղատնտեսական գիտություններ (այդ թվում՝ կենսաբանական գիտություններ)՝ **Մանե Թադեւոսյան,** նախագիծ՝ *«Ինչպե՞ս թափոնից ստանալ արժեքավոր նյութեր»,*
4. Տեղեկատվական տեխնոլոգիաներ (այդ թվում՝ ռազմական գիտություններ)՝ **Լիլյա Հովհաննիսյան,** նախագիծ՝ *«Վաղ ազդարարման սեյսմիկ համակարգ»,*
5. Մանկավարժական գիտություններ՝ **Ջուլիետա Վարդանյան,** նախագիծը՝ *«TeenOri»:*

Հաղթած գաղափարների հեղինակները շնորհակալություն են հայտնել ԿԳՄՍ նախարարությանը հնարավորության համար՝ շեշտելով, որ հաղթանակը մոտիվացնող եւ պարտավորեցնող է: Նրանցից շատերը նպատակ ունեն մեծացնել թիմը եւ ընդլայնել ծրագիրը, ինչին կծառայեցնեն մրցանակը:

Միջոցառման շրջանակում շնորհակալագրեր են հանձնվել նաեւ *«100 գաղափար Հայաստանի համար»* մրցույթի կազմկոմիտեի եւ փորձագիտական հանձնաժողովի անդամներին:

Տեղ համայնքի Սուրբ Գեւորգ եկեղեցու վերականգման աշխատանքները կավարտվեն ընթացիկ տարում

Պետական աջակցությամբ՝ տարեսկզբից իրականացվում են ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Սուրբ Գեւորգ եկեղեցու վերականգման աշխատանքները:

ԿԳՄՍՆ պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության աշխատակիցները հերթական այցն են կատարել Սյունիքի մարզ՝ Սուրբ Գեւորգ եկեղեցու վերականգման աշխատանքների ընթացքին ծանոթանալու նպատակով: Այցին ներկա էին կապալառու եւ որակի տեխնիկական եւ հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչները: Աշխատանքները ընթանում են՝ համաձայն ժամանակացույցի եւ նախատեսված ծրագրի: Քննարկվել են շինարարության ընթացքում առաջացած խնդիրները, տեղում տրվել են նոր նախագծային լուծումներ: Շինարարության ընթացքը գնահատվել է բավարար: Աշխատանքները նախատեսվում է ավարտել ընթացիկ տարում:

Այցի շրջանակում նախատեսված հաջորդ հուշարձանը Սյունիքի մարզի Խնձորեսկ գյուղում գտնվող Մխիթար սպարապետի գերեզմանն էր: Աշխատանքային խմբի կողմից տրվել են համապատասխան հանձնարարականներ Խնձորեսկի պահպանական գոտում իրականացվող շինարարության վերաբերյալ: Քննարկվել է Խնձորեսկին արգելոց-թանգարանի կարգավիճակ տալու անհրաժեշտությունը:

Աշխատանքային խումբն այցելել է նաեւ Վայոց ձորի մարզի Հորս գյուղ, որտեղ վարչական ղեկավարի հետ դիտարկվել են 13-րդ դարով թվագրվող Իշխան Չեսար Օրբելյանի ապարանքը (*«Չեսարի դարպաս»*) եւ նրա հարակից տարածքում գտնվող եկեղեցին: Վերջինը գտնվում էր կիսավեր վիճակում, մի մասով հատում էր գյուղական նշանակության ճանապարհը, որի արդյունքում՝ քանդվել էր եկեղեցու արեւմտյան հատվածը: Մասնագիտական խումբն արձանագրել է պեղումների իրականացման անհրաժեշտությունը, որից հետո թանգարանացման ծրագրի շրջանակում անհրաժեշտ կլինի ձեռք բերել կառույցների միասնական վերականգնման նախագիծը՝ հուշարձանը վերականգնելու նպատակով:







Ներառական կրթություն

Վերանորոգվել է Վանաձորի կենտրոնը

Նախարար **Ժաննա Անդրեասյանը** մասնակցել է ՀՀ Լոռու մարզի Վանաձորի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության վերանորոգված կենտրոնի բացման արարողությանը:

Կենտրոնը վերանորոգվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության համագործակցությամբ՝ *«Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում»* ծրագրի շրջանակում: Վանաձորի ՏՄԱԿ-ի բացմամբ՝ ամփոփվել է ծրագիրը:

Միջոցառմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը,** ՀՀ Լոռու փոխմարզպետ **Հովհաննես Ավետիսյանը,** Վանաձոր համայնքի ղեկավար **Արկադի Փելեշյանը,** ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան առաքելության տնօրեն **Ջոն Ալելոն,** պաշտոնատար այլ անձինք:

«Ծրագրի շրջանակում մեր երեք մարզերում՝ Սյունիքում, Լոռիում եւ Շիրակում, կարողացել ենք ներառականության պահանջներին համապատասխանեցնել ուսումնական հաստատությունների ու տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների պայմանները: Չնայած բարդություններին՝ կարողացանք ծրագիրը հասցնել իր տրամաբանական ամփոփման կետին ու այսօր միասին տեսնում ենք, թե ինչ նոր պայմաններ են ստեղծված երեխաներին անհրաժեշտ ծառայությունները տրամադրելու համար»,- ասել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Ըստ նախարարի՝ համընդհանուր ներառումն իրողություն է ինչպես նախադպրոցական, այնպես էլ արհեստագործական եւ մասնագիտական կրթության ոլորտներում:

Հիմնական նպատակը ՏՄԱԿ-ները հզորացումն է՝ աջակցելու մանկավարժներին, ուսուցիչներին, դասախոսներին, ինչպես նաեւ գնահատելու սովորողների կարիքներն ու տրամադրելու այն ծառայությունները, որոնց անհրաժեշտությունը կա, եւ դրանք հասանելի չեն ուսումնական հաստատության մակարդակում:

Ժաննա Անդրեասյանը նաեւ բարձր է գնահատել գործընկերների հետ համագործակցությունը, որի շրջանակում իրականացվել են համընդհանուր ներառականության բարելավման աշխատանքները. *«Կարծում եմ՝ այսօր մի կողմից ամփոփում, մյուս կողմից ամրագրում ենք կրթական համակարգում ներառականության ամրապնդմանն ուղղված բարեփոխման միջանկյալ արդյունքները: Շատ ուրախ եմ, որ այդ երկար եւ դժվար ճանապարհին ունենք այնպիսի հուսալի գործընկերներ, ինչպիսիք են ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆ ՄԶԳ) եւ ԱՄՆ կառավարությունը, որոնց հետ համատեղ իրականացրել ենք այս կարեւոր ծրագիրը»:*

շարունակությունը՝ էջ 12

«Ամենօրյա առաջնագծում»

Կին գործիչների պատմական դերակատարումը պետք է ավելի տեսանելի դարձնել

Նախարար **Ժաննա Անդրեասյանը** մասնակցել է TEDxYerevan նախագծի *«Ամենօրյա առաջնագծում»* թեմայով քննարկմանը, որն անցկացվել է հարցազրույցի ձեւաչափով: Բանախոսության հիմնական թեման կառավարման համակարգում, հանրային կյանքում եւ մասնավորապես՝ կրթության ոլորտում կնոջ դերակատարմանն ու առաջնորդությանն է վերաբերել:

Պատասխանելով հարցին, թե երկրի համար կարեւորագույն ոլորտների կառավարումը ինչ ջանքեր եւ աշխատանք է պահանջում, Ժաննա Անդրեասյանը նշել է երեք հիմնական հատկանիշ՝ ժամանակի պլանավորումը, գլխավորը երկրորդականից տարբերելու ունակությունը եւ հետեւողականությունը:

«Եթե գիտես՝ ինչ պետք է անել, ինչ ժամկետներում եւ ինչ քայլեր են պետք դրան հասնելու համար, մնացածն արդեն կազմակերպական խնդիրներ են: Ամենակարեւոր խնդիրներից է պատկերացնել այն, ինչ պահանջում ես մյուսներից, որովհետեւ եթե ինքդ չես պատկերացնում, չես կարողանա նաեւ այլոց բացատրել, թե ինչ պետք է արվի: Հետեւաբար, արդյունավետ կառավարման համար պետք է կարողանաս խորությամբ պատկերացնել ոլորտները՝ լսելով մասնագետներին, հաջորդաբար զատելով գլխավորը երկրորդականից: Իհարկե, կարեւոր են նաեւ կառավարման տեսությունն ու գիտելիքները, սակայն դա բավարար չէ, եւ իրականության մեջ կոնկրետ խնդիրը լուծում է ստանում, եթե ունես կառավարման հատկանիշներ: Միեւնույն ժամանակ կառավարումն առանց տեսության շատ վտանգավոր է, որովհետեւ կարող է քաոս առաջանալ:

Կառավարման գործընթացում շատ կարեւոր է երկարատեւ քայլերի պլանավորումը, որը մեր իրականությանը, ցավոք, բնորոշ չէ: Երկարատեւ պլանավորված քայլերի իրագործումը համբերություն է պահանջում»,- ասել է նախարարը:

Անդրադառնալով կրթության կառավարման համակարգում կանանց ներգրավվածությանը՝ նախարարը շեշտել է՝ ինչպես հանրակրթության, այնպես էլ բարձրագույն կրթության համակարգում դասավանդողների մեծ մասը կանայք են, ինչը բնորոշ իրավիճակ է ոչ միայն Հայաստանի, այլեւ ողջ աշխարհի համար:

«Կանայք իրենք կարիք ունեն պատկերացնելու եւ սահմանելու իրենց խնդիրները, որովհետեւ կրթության համակարգում կանանց մեծաթիվ ներկայությունը հանրային ընկալումներում իրավիճակային փոփոխության չի բերում: Հիմա շատ է խոսվում տարբեր ոլորտներում կանանց ներգրավվածությունը խթանելու մասին, ինչը կարեւոր է: Բայց կանայք հաճախ իրենք են դառնում այն կարծրատիպերի վերարտադրողը, որը խանգարում է առաջին հերթին իրենց հանրային առաջխաղացմանը:

Պատկերացրե՛ք, երբ ես հանրակրթության ոլորտը համակարգող փոխնախարար էի, ուսպլանի հաստատման ժամանակ հայտնաբերեցի, որ «Տեխնոլոգիա» առարկայի ժամին աղջիկներն ու տղաները բաժանվում են առանձին խմբերի՝ ըստ սեռերի: Սա գրված էր պաշտոնապես՝ նախարարի հրամանում, որը ենթադրում է, օրինակ, որ չի կարող լինել տղա, ով հետաքրքրվում է խոհարարությամբ կամ դերձակությամբ, կամ աղջիկ, որն ուզում է աշխատել փայտի հետ: Սա պետական քաղաքականության տեսանկյունից աբսուրդ էր:

Մենք փոփոխություն ենք արել եւ սահմանել ենք, որ խմբերի բաժանումը պետք է կատարվի ըստ երեխայի նախասիրությունների: Բայց ի՞նչ ենք ստացել՝ որպես արդյունք: Դպրոցները, ավանդույթի ուժով, շարունակում են աղջիկների եւ տղաների բաժանել խմբերը, չնայած կարգով գրված է՝ ըստ նախասիրությունների: Սրանք շատ դժվար փոփոխություններ են, որոնք պահանջում են մոտեցումների փոփոխություններ:

Երբ ուսուցիչը դասարանում տեսնում է, որ որեւէ աղջիկ հետաքրքրված է մի մասնագիտությամբ, որն իր կարծիքով աղջկա մասնագիտություն չէ, առնվազն պետք է չարտահայտվի այդ մասին, որովհետեւ արտահայտվելով նա ճնշում է գործադրում երեխայի վրա: Կամ նույն կերպ կա մտածողություն, որ մաթեմատիկայից հիմնականում տղաներն են ուժեղ: Այս մասին բարձրաձայնելով՝ մենք աղջիկների մոտ կոտրում ենք այդ առարկայի նկատմամբ ձգտումն ու դրանով առաջ գնալու հնարավորությունը: Նույն կերպ ճնշման են ենթարկվում նաեւ տղաները, երբ փորձում են հետաքրքրություն ցուցաբերել այնպիսի ուղղությամբ, որն ընդունված է համարել աղջկա գործ:

Ուսուցիչներն ամենամեծ ազդեցությունն ունեն երեխաների մտածողության ձեւավորման վրա դա ապացուցված է բազմաթիվ հետազոտություններով»,- նշել է Ժաննա Անդրեասյանը:

Նախարարի խոսքով՝ հանրակրթության նոր չափորոշիչն անցել է տարբեր փորձաքննություններ, այդ թվում՝ գենդերային զգայունության եւ մասնագիտական կողմնորոշման խնդիրների վերլուծության տեսանկյունից: Նաեւ նշել է՝ նոր չափորոշչով մասնագիտական կողմնորոշմանը կարեւոր տեղ է տրվում:

Կրթական ծրագրերում կին գործիչների պատմական դերակատարման ընդգծումը եւս առաջնային խնդիր է, եւ կանանց գործունեության ներկայացումը, ըստ նախարարի, պետք է ավելի տեսանելի դարձնել:

«Մենք արժանավոր կանայք շատ ունենք, եւ պետք է կանանց գործունեությունը պատշաճ ներկայացված եւ գնահատված լինի, որպեսզի նրանք իրենց կերպարով օրինակ լինեն մեր երեխաների համար»,- նշել է նախարարը եւ որպես այս ուղղությամբ արված քայլ՝ հիշատակել օրերս Երեւանի դպրոցներից մեկի անվանակոչումը հայտնի գրող եւ հասարակական գործիչ Զապել Եսայանի անունով:

Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ այս քաղաքականությունը պետք է շարունակվի արձանների տեղադրմամբ, փողոցների անվանակոչմամբ, գրքերի հրատարակմամբ, ֆիլմերի նկարահանմամբ եւ այլ աշխատանքներով:

Նշենք, որ TEDxYerevan նախագծի շրջանակում որպես հարցազրուցավար՝ հանդես է եկել լրագրող, հանրային գործիչ **Մարիա Թիթիզյանը:**

TEDxYerevan նախագծի համակարգող **Քրիստինե Սարգսյանի** տեղեկացմամբ՝ *«Ամենօրյա առաջնագծում»* խորագրով քննարկումը 2023 թվականի առաջին միջոցառումն է:

«Էրազմուս+»

«Էրազմուս+» ծրագրի տեղեկատվական օրերը ԿԳՄՍՆ-ում

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում մեկնարկել են *«Էրազմուս+»* ծրագրի մրցույթում հաղթած հայաստանյան նախագծերի տեղեկատվական օրերը:

ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ միջոցառումը կազմակերպվել էր Հայաստանում *«Էրազմուս+»* ծրագրի ազգային գրասենյակի կողմից: Ներկա էին ԿԳՄՍ նախարար տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը,** Հայաստանում ԵՄ դեսպան **Անդրեա Վիկտորինը,** Հայաստանում *«Էրազմուս+»* ծրագրի ազգային գրասենյակի համակարգող **Լանա Կառլովան,** բուհերի, հասարակական կազմակերպությունների եւ այլ շահառու կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ԿԳՄՍ նախարար տեղակալ Արթուր Մարտիրոսյանը ողջունել է միջոցառման մասնակիցների եւ մաղթել է արդյունավետ աշխատանքային քննարկումներ:

«Մեր համագործակցությունը որակական նոր փուլում է գտնվում, սկսվել է «Էրազմուս+» ծրագրի երկրորդ՝ 2021-2027 թթ. շրջափուլը, որի շրջանակում մեծացել են հնարավորությունները Հայաստանի եւ Եվրոպական միության կրթական հաստատությունների միջեւ համագործակցության զարգացման համար: Մասնավորապես այս շրջափուլում ընդգրկվել են նաեւ նախնական ու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները: Անգնահատելի է «Էրազմուս+» ծրագրի դերը ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի զարգացման եւ ընդլայնման առումով: «Էրազմուս+» ծրագրով ակնկալվող վերջնարդյունքները համահունչ են նաեւ «ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրով որդեգրած բարեփոխումներին՝ միտված բարձրագույն կրթության միջազգայնացմանն ու ակադեմիական շարժունության խրախուսմանը»,- նշել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը:

Նրա խոսքով՝ նախարարությունն ակնկալում է առավել սերտ համագործակցություն *«Էրազմուս+»* ծրագրի ազգային գրասենյակի եւ Հայաստանի ուսումնական հաստատությունների միջեւ: Արթուր Մարտիրոսյանը հույս է հայտնել, որ ազգային գրասենյակի եւ ուսումնական հաստատությունների համատեղ լրացուցիչ ջանքերի ներդրման արդյունքում միջազգային շարժունության ցուցանիշները կբարելավվեն:

Նա ծրագրի շահառուներին հորդորել է իրականացնել փոխկապակցված քայլեր ազգային գրասենյակի հետ՝ շարժունության ծրագրերում ակադեմիական հանրության ավելի լայն ընդգրկվածություն ապահովելու ուղղությամբ:

Հայաստանում ԵՄ դեսպան Անդրեա Վիկտորինը ողջունել է ներկաներին եւ շնորհակալություն է հայտնել արդյունավետ համագործակցության համար եւ համոզմունք հայտնել, որ *«Էրազմուս+»* ծրագրի շրջանակում իրականացվող համագործակցությունները շարունակական կլինեն. *«Հույս ունեմ, որ իրականացվող նոր ծրագրերը կշարունակեն ապահովել շարժունակությունը, կարողունակությունների եւ հմտությունների զարգացումը, կբարձրացնեն բուհական կրթության գրավչությունը»:*

Հայաստանում *«Էրազմուս+»* ծրագրի ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովան նշել է, որ ԵՄ-ի կողմից ֆինանսավորող *«Էրազմուս+»* ծրագիրն աջակցում է ՀՀ-ում բարձրագույն կրթությանը, դասախոսների վերապատրաստումների ն, երիտասարդության եւ սպորտի ոլորտում իրականացվող մի շարք ծրագրերին:

Միջոցառման մասնակիցներին առցանց ողջունել են նաեւ Եվրոպական կրթության եւ մշակույթի գործադիր գործակալության ներկայացուցիչ **Լուսիա Ջիանիննին** եւ Եվրահանձնաժողովի կրթության, երիտասարդության, սպորտի եւ մշակույթի գլխավոր տնօրինության ներկայացուցիչ **Կինգա Բերեզա-Հուսակը:**

Երկօրյա միջոցառման նպատակն է ներկայացնել *«Էրազմուս+»* դրամաշնորհի ստացած բարձրագույն, նախնական արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից իրականացվելիք նախագծերի հիմնական նպատակներն ու ակնկալվող արդյունքները: Միջոցառման առաջին օրը նվիրված էր բարձրագույն կրթության ոլորտին, որի ընթացքում ներկայացվել է բարձրագույն կրթության կարողությունների զարգացման ԵՄ-ի կողմից հաստատված 4 նոր ծրագրեր, *«Էրազմուս Մունդուս նախագծեր»* գործողության շրջանակում շահած անդրանիկ ծրագիրը եւ *«Ժան Մոնե ամբիոն»* նախագիծը: Իսկ միջոցառման երկրորդ օրը նվիրված է լինելու ՄԿՈ-ի ոլորտում կարողությունների զարգացման 3 նոր նախագծերի ներկայացմանը, որից հետո նախատեսվում է պանելային քննարկում ՄԿՈ-ի դաշտի պետական եւ մասնավոր հաստատությունների ներկայացուցիչների հետ:

Շահագրգիռ կողմերը *«European Year of Skills 2023»* խորագրի ներքո նաեւ քննարկելու են մասնագիտական կրթության եւ հմտությունների միջեւ կապը:

Վերանորոգվել է Վանաձորի կենտրոնը

սկիզբը՝ էջ 11

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը հավելել է, որ ներառական կրթությունն ու յուրաքանչյուր երեխայի համար կրթության հնարավորությունների ստեղծումը պետական քաղաքականության հիմնարար սկզբունքներից մեկն է: *«Կառույցները, որոնք ստեղծված են աջակցելու այս գործընթացին, պետք է ապահովեն պայմաններ՝ հնարավորություն տալու ցանկացած երեխայի ստանալ աջակցություն՝ կարիքի առկայության դեպքում»,*- ասել է նա:

ՏՄԱԿ-ի տնօրեն **Սասուն Հարությունյանի** տեղեկացմամբ՝ 2022 թվականից կենտրոնն աջակցում է նաեւ նախադպրոցական ուսումնական հաստատություններին: 2023 թ. կներգրավվեն նաեւ քոլեջներն ու ուսումնարանները: Ընդհանուր առմամբ՝ Վանաձորի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը կսպասարկի 92 դպրոց, 23 նախադպրոցական հաստատություն, 6 քոլեջ՝ ներառյալ Ալավերդու մասնաճյուղը:

Ողջույնի խոսքում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան առաքելության տնօրեն Ջոն Ալելոն արդյունավետ է գնահատել ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությունը՝ նշելով.

«Մենք հավատում ենք, որ ներառական կրթությունը դպրոցներում օգնում է ստեղծել հարգանքի մթնոլորտ: Ստեղծելով այնպիսի միջավայր, որտեղ բոլորն ազնիվ են միմյանց հանդեպ եւ ընդունում են մյուսների անհատական տարբերությունները, ներառական կրթությունը դառնում է ընդունելի հասարակության համար: Այդպիսով, նվազում են երիտասարդների շրջանում բուլինգի, հանցավորությունների, գենդերային խտրականության դեպքերն ինչպես կրթական հաստատությունների ներսում, այնպես էլ՝ դրանցից դուրս»:

Ծրագրի իրականացման եւ համագործակցության համար շնորհակալություն է հայտնել նաեւ ՀՀ Լոռու փոխմարզպետ Հովհաննես Ավետիսյանը: Նա վստահություն է հայտնել, որ տեղական ինքնակառավարման մարմինները մշտապես պատրաստակամ են հնարավոր աջակցություն ցուցաբերելու պետական եւ միջազգային ծրագրերին՝ ի նպաստ համայնքի զարգացմանը:

Հյուրերը շրջել են ՏՄԱԿ-ում, ծանոթացել պայմաններին, դիդակտիկ հագեցվածությանը եւ գործունեությանը: Ծրագրի շրջանակում նորոգվել եւ կահավորվել են 5 սենյակ եւ 7 առաջնային կարիքի ենթակառուցվածք:

«Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» հնգամյա ծրագրի շրջանակում իրականացվել է ՀՀ Սյունիքի, Շիրակի, Լոռու մարզերում 27 հանրակրթական դպրոցների վերանորոգում, արտադպրոցական ծառայությունների իրականացման համար գույքի եւ սարքավորումների տրամադրում, ինչպես նաեւ 3 մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների փոքրածավալ վերանորոգում, յուրաքանչյուր կենտրոնում ռեսուրս - սենյակների վերանորոգում, կահույքի եւ կրթական խաղերի տրամադրում:

Գրքի երեւանյան փառատոն

Հայտնի են գրական մրցույթում հաղթող ճանաչված մրցանակակիրները

Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի մեծ դահլիճում տեղի է ունեցել Գրքի երեւանյան փառատոնի փակման հանդիսավոր արարողությունը: Տարվա գլխավոր գրական իրադարձության ամփոփման ընթացքում ազդարարվել է գրական մրցանակաբաշխության՝ *«Դրամատուրգիա», «Մանկապատանեկան գրականություն», «Պոեզիա», «Արձակ»* անվանակարգերում հաղթող ճանաչված մրցանակակիրների անունները:

Միջոցառմանը ողջույնի խոսքով հանդես է եկել ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության եւ ժողովրդական արհեստների վարչության պետ **Աստղիկ Մարաբյանը:** Գերատեսչության ներկայացուցչի խոսքով՝ արդեն 6-րդ տարին անընդմեջ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության նախաձեռնությամբ Գրքի երեւանյան փառատոնը՝ որպես ոլորտի առանցքային գրական իրադարձություն, *«Քաղաքը կարդում է»* կարգախոսի ներքո իր շուրջն է համախմբում դաշտի բոլոր օղակներին՝ գրող, գրահրատարակիչ, ընթերցող, պետություն եւ համայնք, ստեղծելով միջմշակութային երկխոսության մի հարթակ, որը քննարկումների եւ ճանաչողության, համագործակցության եւ նոր զարգացումների հեռանկարներ է ուղեղնշում:

«Ավելի քան 50 գրողներ 6 երկրներից, այդ թվում՝ Հայաստան, Ռուսաստան, Իտալիա, Գերմանիա, Հունաստան եւ Լեհաստան, շուրջ 40 կազմակերպություն, 25 անվճար միջոցառում, որոնք այս երեք օրերի ընթացքում ներգրավել են հանրության տարբեր տարիքային եւ հետաքրքրություններ ունեցող անձանց: Հետադարձ հայացք ձգելով փառատոնի կայացման ընթացքին՝ վստահաբար կարող ենք նշել, որ 2017 թվականին մեկնարկած Գրքի երեւանյան փառատոնը դարձել է ոլորտի ամենասպասված իրադարձությունը: Այն ձեռք է բերել միջազգային համարում՝ ընդլայնելով մասնակից երկրների աշխարհագրությունը, ծրագրային եւ ինստիտուցիոնալ շրջանակը, եւ իհարկե, համագործակիցների եւ հովանավորների շրջանակը»,- ասել է Աստղիկ Մարաբյանը:

Նրա խոսքով՝ հատկանշական է, որ մայրաքաղաքի ամենասպասված գրական իրադարձությունն անցկացվում է Երեւանի քաղաքապետարանի գլխավոր հովանավորությամբ, ինչը մատնանշում է պետության եւ համայնքի հանձնառությունը՝ որպես գրավոր եւ թարգմանական մշակույթի բազմադարյա ավանդույթներ ունեցող երկրի մայրաքաղաք, Երեւանում ապահովել գրականության, ընթերցանության, ժամանակակից գրական գործընթացները մեկտեղող միջավայր:

«Թո՛ւյլ տվեք շնորհակալություն հայտնել բոլոր հովանավորներին եւ համագործակից կազմակերպություններին, բոլոր մասնակիցներին, գրահրատարակիչներին, գրողներին, ընթերցողներին, եւ իհարկե, փառատոնի ստեղծագործական թիմին, որոնք մեկ տարի շարունակ նախապատրաստվում են այս գեղեցիկ եւ կարեւոր իրադարձությանը»,- ընդգծել է Աստղիկ Մարաբյանը՝ շնորհավորելով կարեւոր գրական իրադարձության կապակցությամբ:

Ներկաներին ողջունել է նաեւ Գրքի երեւանյան միջազգային փառատոնի ղեկավար **Անի Ղազարյանը** եւ շնորհակալություն հայտել փառատոնի բոլոր մասնակիցներին ու կազմակերպիչներին՝ առանձնահատուկ ընդգծելով ընթերցողների դերակատարումը փառատոնի կայացման գործում: Փառատոնի ղեկավարը կարեւորել է գրողների, հրատարակիչների, թարգմանիչների, խմբագիրների կատարած աշխատանքը, որոնց շնորհիվ ընթերցողների գրասեղաններին են դրվում հայալեզու եւ օտարալեզու բազմաթիվ գրքեր

«Շատ հպարտ եմ, որ փառատոնն ունի միջազգային կարգավիճակ, ինչը վստահաբար մեծ պատուհան է բացելու մեր գրողների համար: Արդեն պայմանավորվածություններ են ձեռք բերվել հաջորդ տարվա համար, եւ մեր բանաստեղծները հնարավորություն կունենան անդամակցելու «Վերսոպոլիսե պոեզիայի հարթակին եւ հրավերներ ստանալու Եվրոպայից: Իհարկե, նախապատվությունը կտրվի գրական մրցույթի հաղթողներին»,- եզրափակել է Անի Ղազարյանը:

Գրքի երեւանյան միջազգային վեցերորդ փառատոնի գրական մրցույթում ժյուրիի անանուն, փակ քվեարկությամբ հաղթող ճանաչված մրցանակակիրներն են՝

- *«Դրամատուրգիա» անվանակարգում՝* ***Սամվել Կոսյանը,***
- *«Մանկապատանեկան գրականություն» անվանակարգում՝* ***Ալիս Հովհաննիսյանը,***
- *«Պոեզիա» անվանակարգում՝* ***Գեւորգ Թումանյանը,***
- *«Արձակ» անվանակարգում՝* ***Նորայր Սարգսյանը*** *եւ* ***Գեւորգ Տեր-Գաբրիելյանը,***
- *Հատուկ մրցանակին արժանացել է* ***Արմեն Զախարյանը:***

Գրքի երեւանյան միջազգային վեցերորդ փառատոնին մասնակցում էր շուրջ **40** հրատարակչություն, գրավաճառներ եւ մշակութային կազմակերպություններ, ավելի քան **50** գրողներ, քննադատներ, թարգմանիչներ:

Գրքի երեւանյան միջազգային վեցերորդ փառատոնը ՀՀ ԿԳՄՍ նախարարության եւ *«Վերսոպոլիս»* կազմակերպության աջակցությամբ իրականացրել են *«Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան»* ՊՈԱԿ-ը եւ *«Գրքի փառատոն»* կրթամշակութային ՀԿ-ն՝ *«Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն«* ՊՈԱԿ-ի գործընկերությամբ: Գլխավոր հովանավորը Երեւանի քաղաքապետարանն էր:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի *«Նորամարգի Ա. Քաղեշյանի անվան միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի երաժշտության (13 դասաժամ), կերպարվեստի (4 դասաժամ), տեխնոլոգիայի (8 դասաժամ), մաթեմատիկայի (12 դասաժամ), ինֆորմատիկայի (11 դասաժամ), ֆիզկուլտուրայի (32 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***մայիսի 31-ից մինչեւ հունիսի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունիսի 16-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Նորամարգի Ա. Քաղեշյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցե՝ գ. Նորամարգ, 17-րդ փ., շ. 39:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 77-49-31 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի *«Գեղակերտի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

